

16(591)
20.06.2020

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն և գիտաբար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՐԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՊԱՇՏՈՆՅԱ ՊԵՏՔ Ե ԳԻՏԱԿՑԻ, ՈՐ ԻՆՔԸ ԾԱՌԱՅՈՒՄ Ե ԺՈՂՈՎՐԴԻՆ ՈՒ ՆԱԽԱԳԱՆՆԻՔԻՆ. ԱՇ ՆԱԽԱԳԱՆՆ ԸՆԴԱՅՆՎԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ Ե ԱՆՑԿԱՑՐԵԼ



Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը հունիսի 11-ին անց է կացրել աշխատանքային ընդլայնված խորհրդակցություն՝ նվիրված նախագահի գործունեության ծրագրին:

Խորհրդակցության ժամանակ երկրի ղեկավարը նշել է, որ արդեն հստակեցվել է կառավարության կառուցվածքը, և կազմավորվել կառավարությունը: «Սահմանադրության պահանջով ժամանակն է պատրաստելու և քսանօրյա ժամկետում հրապարակելու Հանրապետության նախագահի ծրագիրը: Ուստի հանձնարարում եմ բոլոր լիազոր մարմիններին մշակել նախագահի ծրագիրը՝ հիմնվելով իմ նախընտրական ծրագրի և «Ազատ հայրենիք-ՔՄԴ» դաշինքի ու «Միասնական հայրենիք» կուսակցության միջև կնքված հուշագրի վրա»,- ասել է նախագահ Հարությունյանը:

Հանրապետության նախագահը հանդես է եկել նաև ծրագրային ելույթով, որն ամբողջությամբ ներկայացնում ենք ստորև.

«Սիրելի՛ հայրենակիցներ

Սիրելի՛ թիմակիցներ
Ստանձնելով Արցախի Հանրապետության նախագահի բարձր պաշտոնը՝ վերջին 20 օրվա ընթացքում հստակեցրել ենք կառավարության կառուցվածքը և կազմավորել կառավարությունը: Այս մեկնարկային կարևոր փուլում առաջնորդվել եմ ԱՀ Սահմանադրությամբ և նախագահի երդմնակալության արարողության ժամանակ իմ ելույթում հնչեցրած հիմնական սկզբունքներով: Ի լրումն դրանց, առ այսօր կայացված որոշումներն ունեցել են մի քանի հիմնական ուղեմիջոցներ, մասնավորապես.

ա) նպատակ են ունեցել ապահովել կառավարության կառուցվածքի արդյունավետությունը՝ հաշվի առնելով առկա հիմնախնդիրները և իմ ու մեր քաղաքական թիմի նախընտրական ծրագրերի առաջնահերթությունները.

բ) նշանակումներում կարևորել եմ որոշում կայացնողների սահուն սերնդափոխությունը՝ ապահովելու համար երիտասարդ միտք ու եռանդուն աշխատանք: Մյուս կողմից, գիտակցելով էվոլյուցիոն զարգացման և կուտակված փորձի

կարևորությունը՝ ձգտել եմ միաձուլել տարբեր սերունդների համեմատական առավելությունները՝ եղած դրականը պահպանելու և միևնույն ժամանակ լրջագույն բարեփոխումներ իրականացնելու հնարավորություն ստեղծելու համար.

գ) հաշվի առնելով երդմնակալության արարողության ժամանակ հայտարարած համերաշխության ու համագործակցության իմ պատրաստակամությունը՝ այս ընթացքում կարևորել եմ քաղաքական լայն կոնսոլիդացիան և համագործակցությունը բոլոր հնարավոր քաղաքական ուժերի հետ: Բնականաբար, համագործակցությունը չի սահմանափակվում պաշտոնների նշանակմամբ, և, ինչպես հայտարարել եմ, համերաշխության ու համագործակցության իմ ձեռքը միշտ մնալու է մեկնած բոլորին, քանի դեռ մենք կիսում ենք նույն հայրենիքը և նույն ազգային արժեքներն ու նպատակները.

դ) հնարավոր բոլոր ջանքերը գործադրել եմ հանրության հետ ռազմավարական հաղորդակցության վարման ուղղությամբ՝ թափանցիկ ու հրապարակային կերպով ներկայացնելով իմ որոշումների հիմքերն ու պատճառները:

Այս և մի շարք այլ ուղեմիջոցներ ընկած են եղել իմ որոշումների հիմքում: Այժմ կառավարությունը կազմավորված է, և Սահմանադրության պահանջով ժամանակն է պատրաստելու և քսանօրյա ժամկետում հրապարակելու Հանրապետության նախագահի ծրագիրը: Ուստի հանձնարարում եմ բոլոր լիազոր մարմիններին մշակել նախագահի ծրագիրը՝ հիմնվելով իմ նախընտրական ծրագրի և «Ազատ հայրենիք-ՔՄԴ» դաշինքի ու «Միասնական հայրենիք» կուսակցության միջև կնքված հուշագրի վրա:

Կառավարության հարգելի՛ անդամներ

Պետական մարմինների հարգելի՛ ղեկավարներն ու ներկայացուցիչներ

Ժողովրդի տված քվեի հիման վրա ձևավորվել է մեր քաղաքական թիմը իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերում, որը իմ գլխավորությամբ պատասխանատվություն է ստանձնել առաջիկա հինգ տարվա ընթացքում Հանրա-

պետությունը առաջնորդելու անվտանգության, զարգացման ու մարդու իրավունքների պաշտպանության դժվարին ուղիով: Ժողովուրդը մեզ է վստահել պետության ղեկը, և մենք իրավունք չունենք հուսախաբ անելու նրան, մենք իրավունք չունենք չօգտագործելու պատմական հնարավորությունները հայրենիքի անվտանգության ու ժողովրդի բարեկեցության ամրապնդման հարցում:

Հետևաբար առաջին հերթին ես եմ պատասխանատու Արցախի Հանրապետության հնգամյա ընթացքի հաջողությունների ու ծախսողումների համար: Ուստի, հենց ես էլ պարտավոր եմ ձեր առջև դնել խնդիրներ ու տալ համապատասխան ուղղություններ: Այդ համատեքստում բոլոր մարմիններից ու պաշտոնյաներից պահանջում եմ իրենց գործունեության մեջ առաջնորդվել ոչ միայն օրենսդրությամբ, այլև հետևյալ հիմնական տասը սկզբունքներով.

Առաջին. պաշտոնավարումը ծառայություն է ժողովրդին: Յուրաքանչյուր պաշտոնյա պետք է գիտակցի, որ ինքը ծառայում է ժողովրդին ու հայրենիքին, ուստի, բոլորիս վարքը պետք է համապատասխանի ծառայության էությանն ու նպատակին: Ոչ մի պաշտոնատար անձ չպետք է իրեն տեր զգա քաղաքացիների հետ շփումներում, մենք բոլորս ծառայում ենք... Սա ամենազլխավոր ու անկյունաքարային սկզբունքն է:

Երկրորդ. ամեն ինչ՝ առաջին հերթին հայրենիքի անվտանգության համար: Առկա մարտահրավերների պայմաններում մեր գերակա խնդիրը եղել է մնում է հայրենիքի պաշտպանումնակության շարունակական ամրապնդումը, զինված ուժերի մարտունակության և ողջ հասարակության ռազմավարական դիմադրողականության մակարդակի հետևողական բարձրացումը: Մենք խաղաղասեր ժողովուրդ ենք և կողմնակից ենք աղբյուրառաջաբանական հակամարտության բացառապես խաղաղ ճանապարհով կարգավորմանը՝ երկխոսության միջոցով, բանակցությունների սեղանի շուրջ: Սակայն, ունենալով ման հակառակորդ, մենք պետք է միշտ պատրաստ լինենք պատերազմի, որը ամենաարդյունավետ ուղին է դեպի խաղաղություն: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր պաշտոնյա և յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է ոչինչ չխնայել հայրենիքի անվտանգության ապահովման գերնպատակին հասնելու համար, և զինված ուժերի կարիքները պետք է բոլորիս առաջնային հոգածության ներքո լինեն:

Երրորդ. պետական միջոցների հանդեպ առավելագույն սրտացավությունը՝ կոռուպցիայի կանխարգելման գլխավոր նախապայման: Խստիվ դատապարտելի են կոռուպցիոն երևույթները և պետական գույքի ու միջոցների հանդեպ ոչ սրտացավ վերաբերմունքը: Մենք

պետք է մեկընդմիջտ համենք մեր հոգեկերտվածքից առնվազն խորհրդային տարիներից եկող այն կարծրատիպը, որ պետական գույքը ստորադասվում է սեփական գույքի համեմատ: Իրականությունը պետք է հակառակը լինի. պետական, այսինքն՝ հանրության գույքը գերակա է սեփական գույքի հանդեպ, և բոլորի մոտ այդ գերակա վերաբերմունքը պետք է գերիշխի: Նաև այդ կարծրատիպից են բխում կոռուպցիոն բազմաթիվ դրսևորումներ, ինչը նշանակում է, որ խնդիրների հիմնական լուծումը մեր հավաքական ու անհատական հոգեկերտվածքի մեջ է: Եվ պետական շահերի պաշտպանության հարցում առաջամարտիկները պետք է լինենք մենք՝ պետական պաշտոնատար անձինք: Անձամբ ես խիստ ու հետևողական եմ լինելու նման դեպքերի կանխարգելման, բացառապես ու պատժման հարցում. ոչ մի ներում չի լինելու հատկապես դիտավորությամբ կատարված նման հանցագործությունների նկատմամբ:

Չորրորդ. ներառականությունը՝ ցանկացած ծրագրի հիմքում: Պետական բոլոր ծրագրերը պետք է լինեն ներառական և հասցեական: Այսինքն, ցանկացած ծրագիր մշակելիս ու իրագործելիս պետք է բոլոր փուլերում ընդգրկված լինեն բոլոր շահագրգիռ կողմերն ու խմբերը, մենք պարտավոր ենք յուրաքանչյուրի կարծիքն ու փորձը հաշվի առնել, և այդ հարցում քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը խիստ նախընտրելի է: Հարկ է արդյունավետ ընթացակարգեր ու կառուցակարգեր գործարկել ու կիրառել հանրության հետ երկկողմանի հաղորդակցության ապահովման համար, ներառյալ՝ հանրային քննարկումների ու էլեկտրոնային ինտերակտիվ գործիքների միջոցով:

Հինգերորդ. գործունեությունն ու ծառայությունները՝ թափանցիկ ու մատչելի: Յուրաքանչյուր պետական մարմնի ու պաշտոնատար անձի գործունեությունը պետք է լինի հնարավորինս թափանցիկ, հաշվետվողական ու մատչելի: Հանրապետության քաղաքացիներն իրավունք ունեն կանոնավոր կերպով իրագրվել իրենց ծառայություններ մատուցող անձանց աշխատանքից, ստանալ մարմանս հաշվետվություններ մեր գործունեության և հանրային միջոցների ծախսման վերաբերյալ: Թափանցիկությունը պետք է ապահովվել ոչ միայն հեռակա, այլև կենդանի հաղորդակցության միջոցով: Թափանցիկության հետ ուղղակիորեն առնչվում է պետության կողմից մատուցվող ծառայությունների մատչելիությունը: Սպասարկման մշակույթը պետք է մտնի պետական հատված, և որևէ դժգոհություն չպետք է լինի քաղաքացիների հանդեպ այս կամ այն հանրային ծառայողի վերաբերմունքից: Այդ համատեքստում խիստ կարևորում են պետական

վարչարարության առավելագույն թեթևացումն ու մատչելիությունը, որի առաջնային ուղղություններից մեկը, հատկապես ներկա մարտահրավերների պայմաններում, բոլոր հնարավոր ծառայությունների ու փաստաթղթերի շրջանառության արագ թվայնացումն է:

Վեցերորդ. օրենքները հավասարապես բոլորի համար են, բացառությունները՝ նույնպես: Կարգուկանոնը և օրենքի առջև հավասարությունը պետք է տիրեն ողջ Հանրապետությունում: օրենքի գերակայությունը պետք է գործի անվերապահորեն, և որևէ արտոնյալ անձ չի հանդուրժվելու մեր կողմից: Ցանկացած անձի վաստակն ու արտոնությունները պետք է լինեն ոչ թե լրացուցիչ իրավունքների, այլ պարտականությունների աղբյուր:


Յոթերորդ. յուրաքանչյուր հանրային ծառայող մարդու իրավունքների պաշտպան է: Մարդու իրավունքների պաշտպանությունն առաջնահերթություն է, քանի որ պետության ցանկացած գործառույթ վերջիվերջո հանգում է մարդուն ծառայելուն և պաշտպանելուն: Այդ առումով կարևոր է և՛ պետության պոզիտիվ պարտականությունների կատարումը, և՛ մարդու իրավունքների մշակույթի ու պատշաճ իրագրվման երաշխավորումը: Յուրաքանչյուր հանրային ծառայող պետք է գործի այն մտայնությամբ, որ ինքը պարտավոր է պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքները և կանխարգելել հնարավոր խախտումները:

Ութերորդ. արժանիքահեն մարդկային ռեսուրսների կառավարում՝ զարգացնող միջավայրում: Մենք զգալի խնդիրներ ունենք մարդկային ռեսուրսների կառավարման բոլոր օղակներում՝ կադրերի ընտրությունից ու առաջնադասումից մինչև շարունակական ուսուցում ու աշխատանքի կառավարում: Կասեի, որ պետական կառավարման ամենահիմնարար խնդիրը հենց մարդկային ռեսուրսների ոչ արդյունավետ կառավարումն է, ինչից էլ բխում են բազմաթիվ այլ խնդիրներ: Մենք պարտավոր ենք նախաառաջ ինքներս սովորել ու պարբերաբար զարգացնել կառավարման համապատասխան հմտություններ ու գիտելիքներ, այնուհետև համակարգը բարեփոխել այնպես, որ երաշխավորենք կադրերի ընտրության արժանիքահեն ու արդար մոտեցումը, իսկ հանրային ծառայողների աշխատանքի համար՝ խրախուսող ու զարգացնող միջավայր, որտեղ կիրառվի յուրաքանչյուր հանրային ծառայողի առավելագույն ներուժը հանուն հայրենիքի անվտանգության ու զարգացման: Գիտակցում եմ, որ սա ամենաբարդ խնդիրներից մեկն է, սակայն յուրաքանչյուրիս հետևողական ու խելացի աշխատանքով կարող ենք մեկ օր դա էլ զլուխ բերել:

Իններորդ. ներդասակ ու նախաձեռնողական աշխատանք՝ թիմային ոգով:

ԸՆԹԱՅ

ԻՆՉ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՆԱԽԸՆՏՐԵԼ ԴԻՄՈՐՂՆԵՐԸ



Ավարտվել է բուհերի ընդունելության հայտերի ընդունումը: Թե ինչպիսին է պատկերն ըստ ընդունելության քննությունների և մասնագիտությունների, հետաքրքրվեցինք ԱՅ գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրեն Յուրի Քարամյանից:

Արցախի պետական համալսարան ընդունվելու համար հայտագրվել է 604 դիմորդ, Շուշիի տեխնոլոգիական համալսարան՝ 52, Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» և «Գրիգոր Նարեկացի» համալսարաններ՝ 35-ական, «Գյուրջյան» կիրառական արվեստների ինստիտուտ՝ 13, ԳՅ բուհերի Արցախի հատկացված տեղեր՝ 162: Նախորդ տարվա համեմատ դիմորդների քանակն ավելացել է: ԳՅ բուհերի համար նրանց թիվը մնացել է անփոփոխ, բայց ԱրԴ-ում ավելացել է 26-ով: Նշենք, որ այս տարի շրջանավարտների քանակն էլ ավելացել է 44-ով և կազմում է 1381: Ընդհանուր 901 դիմորդների մեջ չեն մտնում նրանք, ովքեր հայտագրվել են ԳՅ բուհերին ոչ թե Արցախի հատկացված նպատակային տեղերով, այլ ընդհանուր հիմունքներով ընդունվելու համար: Դրանց թիվը դեռ հայտնի չէ, բայց մեծ էլ չէ. այս երկու օրը կպարզվի, երբ ԳԹԿ-ն տվյալները վերցնի, որպեսզի այդ դիմորդները երկու տեղ՝ և՛ ԳՅ, և՛ Արցախի բուհերի ցուցակներում միաժամանակ հայտագրված չլինեն: Այս ճշտումները հիմա կատարվում են:

Յուրի Քարամյանը տեղեկացրեց, որ արդեն որոշված են քննական կենտրոնները: Ներբուհական քննություններով ընդունվող դիմորդները քննությունները հանձնե-

լու են այն բուհերում, որտեղ հայտագրվել են, իսկ միասնական քննություններն անց են կացվելու վեց քննական կենտրոններում՝ Ստեփանակերտի հ.հ. 1, 2, 5, 6, 7 հիմնական և հ. 8 միջնակարգ դպրոցներում: Միասնական քննություն է հանձնելու 826 դիմորդ: ԳԹԿ տնօրենի հավաստմամբ՝ քննությունները կազմակերպվելու են մեծ դահլիճներում, և ապահովված են լինելու կարանտինային պայմաններում պահանջվող սոցիալական հեռավորության պահպանման կանոնները: 6 քննական կենտրոններում առավելագույնը 60 դիմորդ լինելու է միայն մեկ դեպքում, իսկ մնացած դեպքերում քննություն հանձնողների թիվը կազմելու է 16-ից 40: Քննությունները կսկսվեն հուլիսի 2-ից:

Ամենից մեծ քանակով դիմորդները մաթեմատիկա առարկայից են՝ 300 հոգի: Ամեն տարի ամենաշատը հայոց լեզու քննություն հանձնողներն էին: Նրանց շարքը մասնագիտականից բացի մտնում էին տնտեսագիտական, իրավագիտության բաժինների դիմորդները, որոնց համար հայոց լեզուն քննական առարկա էր: Բայց քանի որ այս տարի դիմորդները մեկ քննություն են հանձնելու, հայոց լեզուն շատ մասնագիտությունների համար արդեն մրցութային չէ: Իսկ մաթեմատիկայի քննությունը, ինչպես եղել է նախորդ տարիներին, այս տարի էլ պահպանվել է տնտեսագիտական մասնագիտությունների համար:

Նույն պատճառով կրկնակի և եռակի պակասել է օտար լեզու և մի շարք այլ մասնագիտություններով քննություն հանձնողների թիվը:

Արցախի պետական համալսարանում այս տարի էլ ամենավարկանշայինը ֆինանսներ և իրավագիտություն մասնագիտություններն են, համապատասխանաբար՝ 84 և 73 դիմորդ, և՛ ԳԹԿ և ֆիզիկական պատրաստություն՝ 64, անգլերեն՝ 48, տարրական մանկավարժության մեթոդիկա՝ 43, հայոց լեզու՝ 37: Ինչպես հասկանում ենք, այստեղ մրցույթ լինելու է: Իսկ մի

շարք մասնագիտություններում ընդհանրապես մրցույթ չի լինելու. այսպես՝ քիմիա մասնագիտության համար դիմել է 2 հոգի, ֆիզիկա՝ 5, մաթեմատիկա՝ 8: Սրանք առաջին տողով հայտագրվածներն են: Յու. Քարամյանի խոսքով՝ մաթեմատիկա մասնագիտության դիմորդները առաջին հայտով միշտ քիչ են լինում, բայց հետո համալրվում են: Նույն ձևով էլ ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտությունն է, որտեղ հիմա առաջին հայտով 9 հոգի են, բայց համալրվելու են տնտեսագիտական և կառավարում մասնագիտություններից մրցույթից դուրս մնացածների կամ կտրվածների հաշվին:

Մրցույթը մեծ է լինելու ԳՅ բուհերում Արցախի հատկացված տեղերի համար, որտեղ 60 անվճար և 29 վճարովի տեղերի համար հայտագրվել է 162 դիմորդ: Միխթար Դերաջու անվան պետական բժշկական համալսարանի անվճար և 10 վճարովի տեղերի համար դիմել է 42 հոգի: «Միջազգային հարաբերություններ»-ում ունենք 3 տեղ, հայտագրվել է 6 հոգի, տեղեկատվական անվտանգության 1 տեղի համար՝ 8 հոգի: Մեծ մրցույթ է սպասվում նաև ԵՊՀ ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտությունում. 2 տեղի համար պայքարելու է 10 հոգի: Մրցույթ լինելու է ճարտարագիտական համալսարանի ճարտարապետության բաժնում. 1 տեղ է տրված, հայտագրվել է 4 հոգի: Տնտեսագիտական համալսարանի շուկայագիտության բաժնում 1 անվճար և 3 վճարովի տեղերի համար կա 12 դիմորդ: Բրյուսովի անվան համալսարանի միջմշակութային հաղորդակցություն, անգլերեն լեզու մասնագիտության 1 տեղի համար պայքարելու է 7 դիմորդ: «Կարևոր մի մասնագիտության համար՝ բնապահպանություն և բնօգտագործում, որը շատ պահանջված է ներկայումս, զարմանում են, որ հայտագրվող չի եղել», - ասաց Յու. Քարամյանը՝ հավելելով, որ մեկ ազատ տեղ էլ մնացել է Հայաստանի ազգային ազարային հա-

մալսարանում:

Այնպես որ, ընդհանուր առմամբ, ԳՅ բուհերում Արցախի հատկացված տեղերը, բացառությամբ այս երկու դեպքի, հայտագրված են, և հույսը քիչ է, որ թափուր տեղեր շատ կլինեն, ու նրանց հաշվին մրցույթը մեծ այլ մասնագիտությունների դիմորդներ կընդունվեն:

Ընդհանրապես, այս տարի, ինչպես խոստանում են կրթության պատասխանատուները, կառավարության որոշմամբ նախատեսված տեղերից ավելի դիմորդներ չեն ընդունի, մասնավորապես ԱՅ նախագահի խոստման համաձայն վճարովի տեղերում ընդունվածները կսովորեն անվճար հիմունքներով:

Դիմորդների համար մեկ այլ հրապուրիչ նախագիծ էլ կա. ինչպես տեղեկացնում են ԱՅ կրթության, գիտության և մշակույթի նախարարությունից, ստեղծվում է «Իվան Աթայան» կրթական ֆոնդ, որը ամսական 50 հազար դրամ կրթաթոշակ է սահմանելու արցախցի այն դիմորդների համար, ովքեր կրթություն կստանան ԱրԴ-ում և ԳՅ բուհերում ֆիզիկա և քիմիա առարկաներից: Կրթաթոշակից կօգտվեն այն ուսանողները, որոնք կստորագրեն ԱՅ ԿԳՄ-ի հետ պայմանագիր առ այն, որ պարտավորվում են աշխատել Արցախում համապատասխան մասնագիտությամբ:

Ինչպես վերը տեսանք, ներկա պահին այդ բաժինները քիչ են դիմել, բայց ամենայն հավանականությամբ բժշկական համալսարանից մրցույթից դուրս մնացածները կդիմեն այստեղ, քանի որ 2-րդ, 3-րդ հայտերով արդեն հայտագրվել են:

Իսկ թե ինչու զայթակղիչ այս առաջարկը միանգամից չի հրապուրել դիմորդներին, Յու. Քարամյանը հետևյալ կերպ է մեկնաբանում. «Դիմորդները ծնողների հետ արդեն 2-3 տարի առաջ կողմնորոշված են լինում: Կրթական այս նախաձեռնությունը ավելի լավ կաշխատի հաջող տարի, մասնավորապես երբ համոզվեն, որ ծրագիրը գործում է»:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՊԱՇՏՈՆՅԱ ՊԵՏԷ ԳԻՏԱԿՑԻ, ՈՐ ԻՆՔԸ ԵՆԱՅՈՒՄ Ե ԺՈՂՈՎՐԴԻՆ ՈՒ ՎԱՅՐԵՆԻՔԻՆ

Թեև յուրաքանչյուր պաշտոնատար անձ ունի իր պարտականություններն ու լիազորությունները, սակայն մեր աշխատանքը թիմային է, և ես պահանջում եմ, որ համագործակցային ու թիմային ոգին տիրի պետական մարմինների համատեղ աշխատանքում: Ներդաշնակությունը պարտադիր պայման է պետական համակարգի աշխատանքում, և անընդունելի են միջգերատեսչական հակասություններն ու այն դեպքերը, երբ մի ձեռքը չգիտի, թե ինչ է անում մյուս ձեռքը: Այդ առումով կուզեի ընդգծել նաև նախաձեռնողականության կարևորությունը. ընդհանրապես կյանքում հաջողում է այն մարդը, ով նախաձեռնող է իր միջավայրի խնդիրները հասկանալու և լուծելու հարցում, իսկ հանրային ծառայողներն առավել ևս պետք է նախաձեռնող լինեն հանրության հիմնախնդիրների լուծման գործում՝ բնականաբար, պահելով համագործակցային ոգին:

Տասներորդ. համազգային ջանքեր՝ համազգային պատասխանատվությամբ: Արցախը մեկ միասնական հայկական աշխարհի անբաժանելի մասնիկն է, ավելին՝ հայության ինքնության ու արժանապատվության համար թերևս ամենավարկար մասնիկը ներկա դարաշրջանում: Դեռևս բար, մենք միայնակ չենք մեր ջանքերում, մեր թիկունքին կանգնած է ողջ հայությունը, առանց որի արդեն փակած կլինեինք հայոց պատմության վերջին էջը: Սակայն մյուս կողմից մենք կրում ենք լրացուցիչ պատասխանատվություն համայն հայության առջև: Ուստի, յուրաքանչյուր պաշտոնատար անձ պետք է գիտակցի այդ հնարավորությունն ու պատասխանատվությունը՝ հետևողականորեն ամրապնդելով Մայր Հայաստանի և Սփյուռքի հետ համագործակցությունն ու ինտեգրացիայի աստիճանը՝ ներգրավելով բոլոր հնարավոր ջանքերն ու ռեսուրսները Արցախի անվտանգության ու զարգացման ուղղությամբ: Միևնույն ժամանակ ներդաշնակությամբ, մասնաձեռնողականության ու թիմային ոգու սկզբունքը կիրառելի է նաև այս հարաբերություններում, ինչը նշանակում է, որ բոլոր դեպքերում պարտավոր ենք մենք էլ ձեռք մեկնել հայության այս կամ այն հատվածին ցանկացած մարտահրավեր համատեղ չեզոքացնելու նպատակով: Մեր համազգային պատասխանատվությունը չի սահմանափակվում միայն հայոց միացյալ հայրենիքի անվտանգությունը և համազգային արժանապատվությունը պահելով առաջնագծում, փոխարենը մենք կհսում ենք պատասխանատվությունը համազգային բոլոր խնդիրների լուծման համար:

Սիրելի՛ թիմակիցներ
Հարգելի՛ հանրային ծառայողներ
Վստահ եմ, որ միասին, համառ ու քրտնաջան աշխատանքի շնորհիվ մենք կկարողանանք կյանքի կոչել նախանշված ծրագրերը և մեր հայրենիքը տանել դեպի զարգացման նոր ուղի, կերտել ռազմական, սոցիալ-տնտեսական ու քաղաքակրթական առումներով հզոր հայրենիք: Պետք է արձանագրել, որ այդ բոլոր ծրագրերի հիմքում մարդն է՝ որպես բարձրագույն արժեք, Արցախի Հանրապետության քաղաքացին, յուրաքանչյուր հայ, նրա երազանքներն ու նպատակները, նրա հոգսերն ու կարիքները, օրինական շահերը, իրավունքներն ու ազատությունները:

Ուստի, բոլորից ակնկալում եմ, իսկ Հանրապետության նախագահին ենթակա բոլոր պաշտոնատար անձանցից խստիվ պահանջում եմ կատարել օրենսդրությամբ իրենց վերապահված պարտականությունները, ինչպես նաև առաջնորդվել օրենսդրությամբ ամրագրված և իմ կողմից նշված սկզբունքներով: Անհրաժեշտ է, որ ինքներդ պարբերաբար ստուգեք ու վերլուծեք, թե, արդյոք, պատշաճորե՞նք եք կատարում ձեր պարտականությունները և հետևում նշված սկզբունքներին և եթե որևէ հարցում թերահամու էք, ապա պետք է պարտաճանաչ ու բարեխիղճ կերպով շտկեք դրանք, սովորեք նոր հմտություններ ու կարողություններ: Հանձնված եմ՝ այդ դեպքում մենք կարճ ժամանակում արձանագրելու ենք նշանակալի հաջողություններ հայրենիքին ու ժողովրդին ծառայելու սուրբ առաքելության մեջ, իսկ ժողովուրդն էլ տեսնելու և գնահատելու է դրանք:

Ի գործ և բարի՛ ընթացք բոլորիս»:

ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՅԻՆ ԳՊՐՈՋԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԻ ՄԱՍՆԱԿԻՅՆԵՐԸ

Դպրոցական առարկայական օլիմպիադաները կրթության որակի խթանման լավագույն միջոց են: Բացի դրանից, այն նպաստում է նաև աշակերտների հետագա մասնագիտական կողմնորոշմանը, ամրապնդում նրանց գիտելիքներն ու կարողությունները, ինչպես նաև մասնակցության ընթացքում ձեռք են բերում որոշակի հմտություններ: Օլիմպիադաներում հաղթելը հաջողություն է ոչ միայն աշակերտի,

այլ նաև նրան դասավանդող ուսուցչի համար: 2019-2020 ուստարում կազմակերպված դպրոցական առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլում տարբեր մրցանակային տեղեր է զբաղեցրել Մարտունու շրջանի դպրոցներից 12 աշակերտ: ԱՅ ԿԳՄ նախկին նախարար Նարինե Աղաբալյանի հրամանով օլիմպիադայի հանրապետական փուլում 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմակիր աշակերտները նա-

խարարության կողմից արժանացել են դրամական պարգևների, իսկ Մարտունու շրջվարչակազմի ղեկավար Արարատ Մելքունյանի կարգադրությամբ՝ օլիմպիադայի հանրապետական փուլում ցուցաբերած արդյունքների համար պարգևատրվել վարչակազմի պատվոգրերով, իսկ նրանց դասավանդող ուսուցիչները՝ շնորհակալագրերով:

ԱՄՈՂ ԱՍՐԻԲԱԲԱՅԱՆ

ՄԱՍՈՒԼ

ԹԵՐԹ ԵՐ ԵՎ ԲԵՐԴ

Ասկերանի շրջանը ստեղծվել է 1978 թվականին: Վարչականորեն դա նոր շրջան էր: Նախկինում կոչվում էր Ստեփանակերտի, և կենտրոնն էլ հենց Ստեփանակերտն էր: 1978 թվականին շրջկենտրոն ճանաչվեց Ասկերան ավանը: Բայց մինչև Ասկերանի շրջանի ստեղծումը կուսակցության միասնական կոմիտե էր գործում Ստեփանակերտ քաղաքի և Ստեփանակերտի շրջանի համար, կոչվում էր կուսակցության Ստեփանակերտի քաղ(շրջ)կոմ: 1978 թվականից շրջանն ունեցավ իր առանձին կուսակցական կոմիտե: Մեկ տարի անց՝ 1979թ. հունվարի 1-ին, լույս տեսավ շրջանային թերթի՝ «Կարմիր դրոշ»-ի առաջին համարը: Մինչև այդ շրջանն ընդհանրապես թերթ չուներ: Հետագայում, Շարժման տարիներին թերթը հրատարակվում էր այլ անվանումով՝ «Խաչեն», ապա՝ «Բերդ»: «Բերդ» թերթն արդեն 40 տարուց ավելի է՝ ընթերցողի սեղանին է: Ինձ համար, այնուամենայնիվ, «Կարմիր դրոշ» է, չնայած այն բանին, որ այդ անունը կոմունիստական գաղափարախոսության կնիքն է կրում: Կարևորը անունը չէր, ձևը, այլ բովանդակությունը, թե ինչ էր քարոզում թերթը, ինչ էր արտացոլում իր էությունը:

Լրագրողական գործունեություն սկսել են «Կարմիր դրոշ»-ում 1982 թվականին: Խմբագրակազմը երիտասարդ էր, լի եռանդով: Այստեղ էին աշխատում երջանակահիշատակ Արարատ Բարսեղյանը, Ավետլանա Խաչատրյանը, Կիմ Գաբրիելյանը, որ ինձնից մեկ շաբաթ առաջ էր աշխատանքի ընդունվել: Հետագայում կուլեկտիվը համալրեցին Նորել Գասպարյանը, Ռոբերտ Եսայանը, Սամվել Հակոբյանը, Վարդգես Օվայանը, Սլավիկ Միրզոյանը, որը 1992թ. մայիսի 10-ին հայրենի գյուղի՝ Սառնաղբյուրի պաշտպանության ժամանակ անհետ կորավ: Բոլորի անունները չեմ թվարկի, բայց ով էլ եկավ, ստեղծագործական ներկայանալիս մի երանգ ավելացրեց: Բոլորս էլ մտածում ու գործում էինք ազատ, անկաշկանդ, ինչը չէր կարող չարտահայտվել գրված նյութերում, շրջապատի, անգամ շրջանային իշխանությունների հետ ունեցած վերաբերմունքում: Պարզ է, լուսաբանում էինք մաս շրջանի կուսակցական կազմակերպությունների գործունեությունը, կուսակցական շինարարության, գաղափարախոսական հարցեր, սակայն՝ առանց պաթոսի, չափի մեջ, չափի մեջ՝ մաս ֆիզիկական իմաստով: Նման նյութերն իրենց ծավալով չէին առանձնանում, թերթի մի համեստ անկյունն էին զբաղեցնում: Թերթի խմբագիրը՝ Լուսահոգի Կոմիտաս Դանիելյանը, մեզանից մեկն էր և լրագրողներիս ինքնուրույն գործելու հնարավորություն էր տալիս:

Երբ ասում եմ՝ ազատ էինք մտածում, դա ոչ թե ինչ-որ բանի, ինչ-որ մեկին հակառակվելու համար, այլ որովհետև չէինք պատկերացնում, թե ինչպես կարող ես, ասենք, համաձայնվել ղեկավար աշխատողի ասածին կամ արածին, երբ համոզված ես, որ նա ճիշտ է: Ինչպե՞ս կարող ես չարտահայտել սեփական կարծիքը: Առժամանակ փոխարինում էի խմբագրին: Գործընկերներիցս մեկի բանաստեղծությունը տպագրվեց թերթում: Ասեմ, որ առհասարակ շրջանային թերթում չգրված մի օրենքով գրական գործեր հազվադեպ էին տեղ գտնում: Նույնը՝ մարզայինում: Բանաստեղծությունը տպագրվեց ոչ թե նրա համար, որ խմբագրի բացակայությունը հարմար պահ էր, ու հեղինակն էլ գործընկերս էր, այլ որովհետև այդ չգրված օրենքը ինքներս էինք ստեղծել, և ես չէի ուզում դրան ենթարկվել: Հանրապետությունում հայերեն գրական մի հանդես էր լույս տեսնում՝ «Գրական Ադրբեջան»-ը, ամիսը մեկ անգամ: Մարզում ստեղծագործող գրողները հազիվ հնա-

րավորություն էին ունենում տարին մի անգամ տպագրվելու ամսագրում, երբեմն այդ հնարավորությունն էլ չէր լինում, քանի որ հանդեսի էջերում ժամանակի թելադրմամբ տեղ էին գտնում և ադրբեջանցի հեղինակների գործեր: Նման պայմաններում ինչո՞ւ էինք սահմանափակում մարզում լույս տեսնող թերթերում գրական գործերի տպագրությունը: Խմբագիրների համար պատկերը պարզ էր, բայց եթե ինչպես մտածում էին, այնպես էլ գործեին, ապա հավանականությունը մեծ էր, որ հրաժեշտ տային պաշտոնին: Քիչ շեղվեցի: Թերթի թարմ համարները առաջին հերթին հասցվում էին կուսակցության շրջկոմ և շրջանային խորհրդի գործկոմ:

Համարը, որում բանաստեղծությունն էր, հենց հրատարակվում է, ինձ հրավիրում են կուսշրջկոմ, առաջին քարտուղարի մոտ: Ընդունարանում սպասելիս շրջկոմի քարտուղարը հարցնում է. «Մտոդ նոթատեսր կա՞»: «Ինչի՞ համար»,- զարմանում եմ: «Որպեսզի ընկեր Գրիգորյանն ինչ ասի՝ գրառես»: Ինչպես թե, հո՞ թերթի համար նյութ պատրաստելու չէի գնացել, հո՞ չէի մտնում հայտնի փիլիսոփայի մոտ, որպեսզի դուրս եկած մտքերը շտապ թղթին հանձնեի, հո՞... Հետո իմացա, որ ընդունված կարգ էր՝ առաջինի մոտ պիտի մտնեիր թուղթ ու գրչով, եթե գրառելու ոչինչ չլիներ էլ, պիտի մի երկու բան խմբագիր՝ ցույց տալու համար նրա ասածի կարևորությունը քեզ համար ու այդպես հաճոյանայիր: Մոտս նոթատեսր չունեի, տվածից էլ հրաժարվեցի: Ճիշտն ասած, պատկերացում անգամ չունեի, թե հետս ինչ խոսելիք պիտի ունենար առաջին քարտուղարը: Մտքով չէր էլ անցնում, որ պատճառը կարող էր լինել թերթում տպագրված բանաստեղծությունը: Վաչագան Գրիգորյանը մտքինը՝ ինչո՞ւ է բանաստեղծություն տպագրվել, ուղիղ չասաց: Այսպես ձևակերպեց. «Դա ի՞նչ բանաստեղծություն է, որ տպագրվել է: Ի՞նչ բան է օգտագործում, ի՞նչ է ուզում ասել հեղինակը»: Խնդրեց բացատրական բառարանից «անհասկանալի» բառերի բացատրությունը կարդալ: Պարզ է, մինչև ինձ նա արդեն կարդացել էր: «Բառը կարող է չափածոյում ուղիղ իմաստով չօգտագործվել»,- հակադարձեցի ես: Կարծես դա քիչ էր, պակասը լրացրի. «Ի՞նչ կարտադիր է, որ բոլորը բանաստեղծությունն ընկալեն այնպես, ինչպես Դուք»: Առաջինի աչքերում զարմանք նկատեցի, բայց ոչ՝ բարկություն: Կյանք տեսած մարդ էր, հասկացավ, որ ասածս բոլորովին էլ իր խոսքն ամտեսելու հանդուժություն չէր, և «վերադասի ասածները չեն քննարկվում» բանաձևն ինձ կամ ծանոթ չէր, կամ էլ ինձ համար չէ:

Հաջորդ օրը Վաչագան Գրիգորյանը բոլորիս համար անսպասելիորեն խմբագրություն եկավ: Նրան մինչև այդ կոնկրետ ինքս երբևէ խմբագրությունում չէի տեսել: Մտավ մեր աշխատասենյակ: Կարծես մեկ օր առաջ ոչ մի խոսակցություն չէր եղել մեր միջև: Հարցրեց թերթի գործերից, հետո սահուն անցավ այլ թեմայի: Զրուցեցինք պոեզիայի, ընդհանրապես գրականության շուրջ, իր սիրած պոետներից տողեր մեջքերեց: Երևի կարծում էր, թե մախրող օրն ինձ վրա կոշտ, պոեզիայից հեռու մարդու տպավորություն էր թողել (ամենևին այդպես չէր) և ուզում էր ջնջել այն: Նա իր պարտքն էր համարել ոչ ուղղակի ձևով ինձ զգուշացնել «անխոհեմ» քայլերի հետևանքներից: Պաշտոնը նրան թույլ չպիտի տար ասել այն, ինչ իր սրտում է, ասել այն, ինչ մտածում է: Այո, հաճախ ինքներս ենք իշխանավորից կուռք ստեղծում՝ մոռանալով, որ իշխանավորն էլ մեզ մեծ մարդ է:

Մի ուրիշ դեպք էլ մեզ: Բոլորովին նոր էի աշխատանքի անցել և պետք է լուսաբանեի մի միջոցառում, որում զեկուցու-

մով պիտի հանդես գար կուսշրջկոմի երկրորդ քարտուղարը: Ես ուշադիր լսում էի և առանցքային շեշտադրումների մասին համառոտ նշումներ անում: Այն ժամանակ ծայրագրիչ սարք՝ դիկտոֆոն, ով ուներ: Երբ եկա աշխատավայր, խմբագիրը հետաքրքրվեց. «Ձեկուցումը վերցրե՞լ ես»: Դե, փորձ չունեի, չգիտեի էլ, որ կարելի էր վերցնել: «Ինչ ձևով ուզում ես՝ վերցրու»,- ասաց: Այսինքն՝ ես չեմ խառնվելու, ում միջոցով ուզում ես՝ ձեռք բեր: Չհասկացա, որ դա էր ակնարկում, որովհետև մտքովս չէր էլ անցնում, որ երկրորդ քարտուղարից ինչ-որ բան վերցնելը պիտի լինի երրորդ անձի միջոցով, «շարքային» մահկանացուներին արտոնված չե անմիջապես դիմել նրան: Ձևը ո՞րն էր: Ըստ իս, ձևն այն էր, որ գնայի զեկուցողի մոտ: Այդպես էլ վարվեցի: Հրաման Հայրիյանը բարյացակամորեն ընդունեց ինձ և քանի որ չէր ճանաչում, հետաքրքրվեց իմ ով լինելով, թե երբ եմ աշխատանքի ընդունվել և այլն: Նա արտառոց ոչինչ չտեսավ նրանում, որ խմբագիրը կամ մեկ ուրիշը չի դիմել իրեն, այլ սկսեց մի լրագրող ու աշխատողներից մեկին հանձնարարեց զեկուցման տեքստը տալ ինձ: Խմբագրին էլ հասկանալ կարելի էր, ուզում էր վստահ լինել, որ գրածս նյութում զեկուցման մեջ արծարծված հարցերը ճիշտ են ներկայացված: Երբ զեկուցողը ոչ այլ ոք էր, քան երկրորդ քարտուղարը. զգոնությունը երբեք ավելորդ չէր:

Խմբագրության կուլեկտիվը համերաշխ էր: Բոլորս էլ ձգտում էինք, որ թերթը սպասված լինի ընթերցողի համար: Ասում էին, որ «Կարմիր դրոշ»-ը մյուս շրջանային թերթերից իր նյութերով շահեկանորեն առանձնանում էր:

«Կարմիր դրոշ»-ն անուրանալի դեր կատարեց 1988 թվականի փետրվարյան զարթոնքը նախապատրաստելու գործում, յուրովի առաջամարտիկ էր թերթերի մեջ: Տպագրվող ազգային-հայրենասիրական բովանդակությանը նյութերը, մեր մեծերին նվիրված էջերն արցախցու մեջ բորբոքում էին պայքարի ոգին, Ադրբեջանի լուծը թոթափելու վճռականությունն ավելացնում: Թերթի թղթակցային ակտիվը մեծացավ: Ստեփանակերտից մեզ մոտ էին բերում հողվածներ, որոնք «Սովետական Դարաբաղ»-ն անկասկած մեղծելու էր: «Կարմիր դրոշ»-ը դրանք տպագրում էր ոչ միայն նրա համար, որ խմբագիրը ռիսկից չէր վախենում, այլ նաև նրա համար, որ շրջկոմի առաջին քարտուղարը հայրենիքն ու ազգը սիրող անձնավորություն էր, նրա լուռ համաձայնությամբ էր այդ ամենը կատարվում:

Արցախյան շարժման՝ Ասկերանի նախաձեռնող խումբը իմնականում հավաքվում էր թերթի խմբագրությունում, իսկ խմբագիրն ու գյուղաբաժնի վարիչ Սլավիկ Միրզոյանը խմբի անդամներ էին: Թերթի աշխատողներս Կրեմլ ուղարկված՝ Լեռնային Դարաբաղի Ինքնավար Մարզը ՀԽՍՀ-ին վերամիավորելու խնդրագրի տակ առաջիններից ենք ստորագրել, երբ դեռ ամեն ինչ գաղտնի էր արվում, և քչերն էին համարձակվում նման քայլի գնալ:

Երբ 1988թ. փետրվարի 22-ին Ադրամից թուրք բազմահազարանոց խուժանը հարձակվեց Ասկերանի վրա, այդ մասին իմ ստորագրությամբ փոքր հողված տպագրվեց թերթում: Այն ժամանակ հնարավոր չէր բացահայտ ասել, թե ով էր հարձակման կազմակերպիչը, բայց այսպիսի մի ակնարկ կար գրվածում՝ «Ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է»: Մեծ գրողի խոսքերն էին հիշեցվել: Հողվածում ուշադրություն էի դարձնում այն հանգամանքի վրա, որ արյունահեղությունը կանխվել է ոչ թե հուրանամի՝ եվտուշենկոյի ներբողած լաչալի շնորհիվ, ոչ թե խորհրդային զինվորների շնորհիվ, որոնց Ստեփանակերտից

Ասկերան տեղափոխվելը մի քանի ժամ տևեց 20 րոպեի փոխարեն, այլ Ասկերանը պաշտպանած հայրողիների շնորհիվ: Մի քանի օր հետո խորհրդային զորքերը պիտի դարձյալ ուշանային, որպեսզի Սումգայիթում ադրբեջանցիներն անարգել ու անպատիժ՝ հայերին կոտորեին: Հողվածը գրելով մեծ պատասխանատվություն էի վերցրել ինձ վրա, ավելի մեծ պատասխանատվություն՝ խմբագիրը՝ այն տպագրելով, ամենամեծ պատասխանատվությունը՝ շրջկոմի առաջին քարտուղարը: Սլավիկ Միրզոյանը թերթի համարներից տարավ ու բաժանեց Ստեփանակերտի կենտրոնական հրապարակի միտինգավորներին: Եկավ և ուրախությամբ հայտնեց, թե ինչպես էին թերթը ձեռքից ձեռք խլում: Իրավ, մարդիկ կարող էին հրապարակավ ասված ու գրված ճշմարիտ խոսքի:

«Կարմիր դրոշ»-ի աշխատողների մեծ մասը Ստեփանակերտից էր: Ամեն օր Ասկերան գնալ-գալը հեշտ չէր: Եվ ես աշխատանքի անցա նորաստեղծ մարզային հեռուստատեսությունում: Սիրածս կուլեկտիվից բաժանումը ծանր էր, բայց դա մի օր պիտի տեղի ունենար: Թերթի հետ կապերս վերականգնեցի 1992-ի աշնանը: Արցախն օրհասական օրեր էր ապրում, թշնամին առաջ էր խորացել, հասել Խաչենի ծորակ: Ասկերանի շրջանի հիմնարկները, կազմակերպությունները տեղափոխվեցին մարզկենտրոն: Ավանում մնալն ու աշխատելը շատ վտանգավոր էր:

Ուշ երեկո էր: Մի օր մեր դուռը թակեցին: Երկու երիտասարդներ էին՝ զինվորական համազգեստով: Մեկը Հակոբ Դահրամանյանն էր՝ շրջխորհրդի գործկոմի ֆինանսական բաժնի վարիչը (այժմ Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավարն է): Մյուսը Արվիդ Ավանեսյանն էր՝ շրջխորհրդի գործկոմի կրթության բաժնի վարիչը: Նրանք խնդրեցին, որ ստանձնեն շրջանային թերթի խմբագրի պաշտոնը: Նրբամկատորեն հրաժարվեցի, բայց խոստացա օգնել, որ թերթը շարունակի լույս տեսնել: «Կարմիր դրոշ»-ում աշխատելու տարիներն ինձ հնարավորություն էին տվել ճանաչելու շրջանը, նրա մարդկանց: Թե՛ շրջանը, թե՛ նրա բնակիչները հարազատացել էին ինձ, ուստի չէի կարող անտարբեր լինել թերթի ճակատագրի նկատմամբ: Խոստումս կատարեցի: Միայն 1995 թվականին, երբ թերթի խմբագրությունը տեղափոխվեց Ասկերան, սկսեցի զբաղվել միայն իմ հիմնական աշխատանքով:


Թերթն իր գործունեությամբ կազմակերպեց ու համախմբեց ժողովրդին և ուսքի հանեց ընդդեմ բռնատիրության: Պատերազմի տարիներին նա թշնամու դեմ մարտնչող զինվորի կողքին էր քաջալերիչ խոսքով, ներկայացնում էր առաջնագծում տիրող իրավիճակը, ռազմաճակատային իրադարձությունները: Խաղաղ օրերին երկիրը շենացնող մարդու կողքին է՝ ձեռքբերումների հետ միասին մատնացույց անելով այն խոչընդոտները, որոնք կան մեր ճանապարհին, այն հարցերը, որոնք մտահոգում են հանրությանը:

Ինչպես բոլոր թերթերի, «Բերդ»-ի համար այսօր խնդիր է բաժանորդագրության կազմակերպումը: Ոչ միայն դա: Դժվար է նաև թերթի առաքումը եղած բաժանորդներին: Թերթի էլեկտրոնային՝ թե՛ տպագիր տարբերակ: Օպերատիվության առումով կայքի առավելությունն ակնհայտ է: Սակայն ծի՞շտ է, արդյոք, տպագիր տարբերակից հրաժարվելը: Կարծում եմ՝ և՛ մեկը, և՛ մյուսն անհրաժեշտ են:

Ինչպես զուգորդել այս երկուսը՝ ահա այս հարցի պատասխանը պիտի գտնվի:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԻ ԵՐԿՐԻ ԱՆՍԱՀ ԵՐԳԻՉ
(Վ. Տերյանի ծննդյան 135, մահվան 100-ամյակի առթիվ)



2020 թվականը ավստասանքի և հայարտության զգացումով կարող ենք համարել Տերյանական տարի: Ավստասանքի, որովհետև 20-րդ դարի սկզբին, երբ հայ պոետիկայի երկնակամարում արդեն շողողում էր թունամյան-հասակայան-Սիամանթո-Վարուժան աստղաբույլը, Տերյանն իր «Մթնշաղի անուրջներ»-ով մի նոր դարաշրջան բացեց արևելահայ պոետիկայում. որքանոց գրական մթնոլորտը ծիածանվեց հոգեպարար երգերով, հիմնադրվեց գրական լեզվի նոր դարձը, որի գանգի դողանքները հնչում են առ այսօր և դողանքներ են այնքան ժամանակ, որքան հայ մեծարը արարելու է մեծարպատառ իր գրականությունը:

Սակայն... Մի ուրիշ նվիրում ևս ծիածանվում է Տերյանի անմարում փառքի երկնակամարում, որն առնչված է մայր ժողովրդի ծանր ճակատագրին, որի սահմանի վրա նա համել էր Մեծ Լուռեցու կողքին որպես Մարդ-քաղաքացի, իր ժողովրդի իրավունքների պաշտպան, անմուրաց զինվորային: Այդ էին պահանջում մայր ժողովրդի վտանգված ճակատագիրն ու ապագան: Դա մի ժամանակաշրջան էր, որը հաջորդել էր 19-րդ դարի վերջին Սուլթան Զամիդի կազմակերպած ցեղասպանությանը, երբ թուրքական կառավարող շրջանները գաղտնի կոտորում էին Կոստանդնուպոլսի հայ բնակչությանը, իսկ 1909թ. կազմակերպվեց Ադանայի հայկական ջարդը, որին զոհ գնացին 30 հազար անմեղ հայեր: Իսկ հորիզոնում անընդմեջ բարձրացվում էր երիտթուրքերի մահաբեր յաթաղանը:

Հիրավի, վտանգված էր հայ ժողովրդի գոյությունը իր դարավոր հայրենի հողի վրա, իր կերտած օջախներում, գյուղերում, քաղաքներում: Իրավիճակը հասել էր նրան, որ եվրոպական մի շարք գործիչներ, այցելելով Հայաստան, հանդես էին գալիս մանուկի էջերում, գրում հայ ժողովրդի վտանգված կյանքի մասին: 1912թ. Հոկտ. Թունամյանը, խոսելով Հայկական հարցի մասին, նկատել է. «Ստեղծվել է մի դրություն, որ նշանավոր գիտնական էլիզե Ռեկյուլին տրամադրում է լուրջ կերպով կարծիք հայտնելու, թե հայ ժողովուրդը ոչնչանալու ճանապարհի վրա է, և շատ չի քաշիլ, որ Արևելքի մի քանի անհետացած կուլտուրա-

կան ազգերի նման նա էլ կիջնի պատմության ասպարեզից»: (Հ. Թունամյան, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 4, 1969, էջ 150):

Այդ ժամը ապրումների արդյունք է Վ. Տերյանի «Մի՞թե վերջին պոետն են ես» հավերժախոս երգը.

Մի՞թե վերջին պոետն են ես,
Վերջին երգիչն իմ երկրի,
Մահն է, արդյոք, թե մինչը թեզ
Պատել, պայծառ Նաիրի:

Վտարանդի երկրում աղոտ,
Լուսե՞ր, թեզ են երազում,
Եվ հնչում է որպես աղոթք,
Արքայական քո լեզուն:

Հնչում է միշտ խոր ու պայծառ,
Եվ խոցում է, և՛ այրում,
Արդյոք բոցե վարդե՞րդ են վառ,
Թե՞ վերջերն իմ հրահրում:

Ահով ահա կանչում են թեզ՝
Ցոլա, ցնորք Նաիրի,-
Մի՞թե վերջին պոետն են ես,
Վերջին երգիչն իմ երկրի:

Այս անձեռնակերտ կոթողը Վահան Տերյանի հայրենասիրական տազնապած, միաժամանակ հուսավառ ապրումների արդյունք է: Պատահական չէ Պետերբուրգից 1914թ. Մեծ Լուռեցու դուստր Նվարդ Թունամյանին հղած նրա նամակը, որտեղ ընդգծված է. «Վերջ ի վերջո ես սկսում եմ գալ այն եզրակացության, որ մեր հայրենիքի ցավը մեզ այնպես է մաշում, ջլատում, կեղեքում, որ մենք դառնում ենք անընդունակ ուրիշ բան հասկանալու կամ անելու... Տարիներով մենք ձգտում ենք ստեղծել մեզ համար գոյության միմիայն պայմաններ, որպեսզի նվիրվեք մեր կոչման - իսկ մինչ այդ վատնում ենք մեր բոլոր ուժն ու կարողությունը և հանկարծ դառն սրտով տեսնում ենք, որ միջոցը նպատակ է դարձել, և անցածը ետ դարձնելու հնար չկա: Այդպես ենք մենք բոլորս - կոտորված, զետնահար խոտի նման, ընկած, պարտված, անհույս ու անհավատ: Այդպես մեր հայրենիքի հոգին է մեռնում, իսկ մարդիկ կարծում են, որ կարելի է նրան կենդանացնել... Չկարծեք, թե այժմ են միայն զբաղեցնում ինձ այդ մտորումները, ավա՛ր, շատ վաղուց: Եվ չեմ ազատվի դրանցից երևի մինչ վերջը - ինչպե՞ս ազատվես ինքը թեզից... Այդպես, իմ հոգու նման այրվում է և իմ երկիրը, «Իմ Նաիրիին» - գուցե դրա համար է այրվում և իմ հոգին, որովհետև իմ հոգու մեջ «Նաիրյան չքնաղ հոգին է այրվում»: (Վ. Տերյան, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 4, «Սովետական գրող» հրատ., 1979, էջ 175-176):

Վ. Տերյանի նաիրյան հոգում եռացող այդ տառապանքն է, որ դարձել է հայտնի «Երկիր Նաիրի» շարք, որի և՛ կոմպոզիցիոն ամբողջականությունը և՛ զարավարական բովանդակության ողջակիզվող ընթացքն առնչվում են Հայոց ցեղասպանությանը: Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ, այդ շարքը ոչ միայն մարդկության հանդեպ աններելի հանցագործություն հանդիսացող ցեղասպանության բննադատությունն ու ժխտումն է, այլև հայրենասիրական լավատեսական զգացումների փունջ՝ ի հեճուկս չար ու դաժան ուժերի,

տվյալ դեպքում՝ Օսմանյան Թուրքիայում գորչ գայլերի ոհմակ երիտթուրքերի: Այդ նշանակում է, որ մինչև «Երկիր Նաիրի» շարքի մերօրյա արժևորումը կարևոր ենք համարում թեկուզ և համառոտ, անդրադառնալ Տերյանի հայրենասիրական պոետիկայի ակունքներին՝ դրանով իսկ հերքելով այն սխալ կարծիքը, որ Տերյանի հայրենասիրական քնարը կապում են միայն «Երկիր Նաիրի» շարքի հետ:

Ճշմարտությունը պահանջում է նշել ամխոնջ տերյանագետ Վաչե Պարտիզունու դիտարկումն ու կարծիքն այդ հարցի վերաբերյալ: Նա գրում է. «Այժմ շատ ջրեր են հոսել, շատ հարցեր են գտել իրենց լուծումը, սակայն ցայսօր մեր գրականագիտության մեջ Տերյանի հայրենասիրության թեման շարունակում է սեղմվել խիստ անձուկ շրջանակներում: Այդ թեման ոճանք սկսում են 1915, իսկ լավագույն դեպքում՝ 1913 թվականից, պնդել են, թե «Երկիր Նաիրի» շարքով Տերյանը անցել է նոր թեմայի, որը մինչև այդ տեղ չի գտել նրա ստեղծագործություններում: Այդ երգերով է, ասել են, որ նա կապվում է հայ գրականությանը»: (Վ. Պարտիզունու, Վահան Տերյան. ստեղծագործությունը, «Հայաստան» հրատ., 1968, էջ 207):

Վ. Պարտիզունու ըստ էության սխալ է համարում այդ մակերեսային կարծիքը և համոզիչ փաստերով ապացուցում, որ Տերյանը իր հայրենասիրական պոետիկայի անկրկնելի կոթողների մեծ մասը ստեղծել է համեմատաբար վաղ շրջանում:

Հիրավի, անդրադառնալով, կրկին ու կրկին ըմբռնելով մեծ բանաստեղծի քնարագությունը, տեսնում են, որ նա հայրենասիրական երգեր գրել է ստեղծագործական բոլոր շրջաններում: Տեղին է ընդգծում Վաչե Պարտիզունու. «Հայրենասիրությունը Տերյանի համար ոչ միայն թեմա է եղել, մոտիվ, այլև կեցություն, նրա քաղաքացիական և գեղագիտական իդեալների, նրան հուզող բոլոր հարցերի, աշխարհայացքի ու աշխարհընկալման հիմքը» (Նույն տեղում, էջ 208):

Այլ կերպ լինել չէր կարող: Տերյանը, որ ծնվել է Ջավախքի ծաղկուն լեռնալանջերին ծվարած հայկական Գանձա գյուղում, դաստիարակվել քահանա հոր՝ Տեր-Սուրբիսի հայաշունչ խորհուրդների, ընթերցած բանաստեղծությունների, հեքիաթների, պատմվածքների օրորներով, վերջապես ըմբռնելով խորհեմացու, Եղիշեի, Նարեկացու, Շնորհալու և մյուս մեծերի երկերը, երևակայության մեջ միանալով ԲաժՖու, Մուրացանի կերտած հայրենասեր հերոսների շարքին, չէր կարող իր թոթովանքները չնվիրել հայրենիքին, ժողովրդի ճակատագրին: Նորովի ընթերցելով Տերյանի «Մթնշաղի անուրջներ»-ի երգերը և հետագայում տպագրված անտիպ հյուսվածքները, հոգով ձուլվում են նրա ստեղծած գեղարվեստական պատկերներին, որովք հայրենի բնությունը երանգների ծփանքներ են, հայրենի օջախի հանդեպ անհուն կարոտի կրակներ, ծննդավայրի համ-

դեպ ունեցած սրտավառ հուշերի ակնկոծումներ:

Հայրենի եզերքի սիրով վառվող, հայրենի լեռները անառիկ ու հացաբույր դարձնող հայրենակիցների կարոտով բարբախող սիրտը միայն կարող է շնջալ այսքան բնությունը և այսքան առիքնոջ տողեր.

Հովիվներն այնտեղ կրակ են արել

Սարերի վրա - օ՛, անո՛ւշ հեռու,
Չայնում են անվերջ մթնում իրարու,

Հովիվներն այնտեղ կրակ են վառել:

Այս, սիրտս թռավ աշխարհն այն հեռու,

Ուր, հին, հնչում ես Բարբառ հայրենի,

Հովիվներն այնտեղ կրակ են վառել,

Սարերում իմ բաց, օ՛, անո՛ւշ հեռու...

Այսքանից հետո պարզ է դառնում Վ. Տերյանի վերաբերմունքը հայրենի երկրին, որն արտահայտված է հեռուներում ապրող հարազատների հանդեպ եղած կարոտով: Նրա երգերի ենթաբնագրային բազմաշերտ աշխարհի, սիրո զգացումների, Արագեղեցիկյան շքունջների, մայրենիի հանդեպ ունեցած նվիրումի ճիշդ դառնում է «Ես չեմ դավաճանի իմ Նվարդին» խոստովանություն:

Հայրենիքի հանդեպ սերը Տերյանի հոգում կամարվել է ծիածանի գույներով՝ բազմաշերտ, բազմերանգ, գարնանաթույր, աշնանաթույր, ձյունաճերմակ, տազնապած և հուսալից:

Ինչքան էլ զբաղված լինեք Վահան Տերյանը մշակութային տարբեր գործերով, միևնույն է, նրա սիրտը տրոփել է պոետիկ հանդեպ ունեցած աստվածանվեր սիրով: «Մթնշաղի անուրջներ»-ից անցել էր չորս տարի: 1912-ին լույս է տեսնում նրա «Բանաստեղծություններ» ընտրանու առաջին գիրքը: Այդ թվականին նա ավարտել էր նաև Մոսկվայի համալսարանը: Հարստացել էր նրա գիտելիքները՝ հայալեզու, ըմբռնելով էր համաշխարհային գրական մեծերի՝ Շեքսպիրի, Գյոթեի, Հայնեի, Դյուրանտի, Բայրոնի, Վերհարնի, Բողլեի, Իբսենի, Մետերլինգի, Էդգար Պոի և մյուս հսկաների գրական անթառամ էջերը: Չմոռանաք, որ նրա բանաստեղծական աշխարհի երկնակամարում առաջին հերթին փայլատակել են ռուս գրականության դյուցազուններ Պուշկինի, Լերմոնտովի, Տոլստոյի, Դոստոևսկու, Չեխովի, Տուրգենևի, Գոգոլի, Բարատինսկու, Տյուտչևի, Գորկու, Եսենինի, Բլոկի, Բրյուսովի, Բայլմոնտի բանաստեղծական բազմաբնույթ ու բազմերանգ հյուսվածքները: Այդ են վկայում ոչ միայն նրա գրական հայացքները՝ առնչված վերոնշյալ արվեստագետների հայացքներին, այլև նրանցից կատարած բարձրարվեստ թարգմանությունները:

Տերյանի համար գրաքննադատության ասպարեզում բացարձակ մեծություններ էին Բեկիսկին, Չերնիշևսկին, Դոբրոլյուբովը, Գերցենը, Նալբանդյանը: Յուրացնելով համաշխարհա-

յին գրականության լավագույն ավանդույթները՝ Վ. Տերյանը 1914թ. անդրադարձավ հայ նոր գրականության դասականներին և հանդես եկավ իր հայտնի «Հայ գրականության գալիք օրը» գեկուցումով:

Որպես խստապահանջ գրող առաջին հերթին հենց իր հանդեպ՝ Տերյանն այդ գեկուցման մեջ մի կողմից արժևորեց հայ գրականության ձեռքբերումները, մյուս կողմից պահանջեց ավելի հարստացնել մեր գրականությունը կյանքից առած տարբեր մոտիվներով: Նա նշեց, որ հայ իրականության, հայ ժողովրդի քաղաքական պայմանների պահանջով մեր գրականության մեջ իշխողը հայրենասիրության մոտիվն է: Բազմաբնույթ գրականություն ստեղծելու հրամայականը պետք է հուզի հայ բոլոր գրողներին: Դա 1914թ. ամառն էր: Նույն թվականի օգոստոսին սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, որը հայ ժողովրդի համար դարձավ 1915 թվականի ապրիլ, Հայոց ցեղասպանության ահավոր տարի: Եվ բազմաբնույթ ու բազմամոտիվ գրականություն պահանջող Տերյանը և իր գրիչը թաթախեց հարազատ ժողովրդի կրած տառապանքից թպրտացող իր սրտի արյան մեջ ու գրեց «Երկիր Նաիրի» շարքը:

Ցավալի է, բայց փաստ է, որ 1915 թվականի ապրիլից հայ գրականության մեջ սկիզբ առավ Հայոց Մեծ ցեղասպանությունը պատկերող պոետիկան: Հայ ժողովրդի անանցանելի ցավի ճիշդ, կորուսյալ հայրենիքի կարոտը, Դեր Ջորի անապատում անթաղ մնացած հազարավոր մայրերի ու մանուկների վիշտը, վրեժի կանչը, հույսի ծփանքը պատկերվեցին մեր գրողների երկերում: Այդ պոետիկայում բիրելական Արարատը խորհրդանշվեց որպես եղեռնական պատանդ: Հայ գրականության կանգուն սյուների՝ Հովի. Թունամյանի, Ավ. Իսահակյանի և մյուս գրողների սրտերում արյուն կաթեց: Դրանց շարքում էր նաև նրբասիրտ Վահան Տերյանը, որը հանդես եկավ բանաստեղծությունների առանձին շարքով:

Ճիշտ է, «Երկիր Նաիրի» շարքը գրված է Հայոց ցեղասպանության պատճառած ցավատանջ զգացումներով, սակայն Տերյանի շարքը միայն ողբերգական ապրումների փունջ չի կարելի համարել: Տերյան-բանաստեղծի արյան կանչը և՛ ցավոտ է, և՛ հուսավառ, և՛ արցունքոտ է, և՛ վրեժախուր, և՛ տրտում է, և՛ հավատախիտ: Տերյանը, դիմելով հայրենիքին, անձնավորում է նրան՝ միաձուլելով «Հայրենիք» և «ժողովուրդ» հասկացությունները: Բանաստեղծը ցավով նշում է, որ հայրենիքը «Հպարտ չէ... տրտում է...»: Սակայն հպարտությանը ընդգծում է, որ նա իմաստուն է, իմաստուն է նաև նրա երգիչ որդին, որի սրտում ծփում է խիտերի ու մտորումների մի օվկիան՝ հայրենիք-մոր հանդեպ սիրո ջերմությամբ ու նվիրվածությամբ.

Չըշխացա խնդուն փառքիդ
Անցյալ ու հին փայլով երբեք,
Սիրեցի հեզ, անքեն հոգիդ
Եվ երգերդ մեղմ ու բեկբեկ:

ԱՆՅԱԼԸ ԽՈՍՈՒՄ Է

ՃԻՇՏ ՈՒ ՆՊԱՏԱԿԱՍԼԱՅ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ



Մեր ձեռքի տակ է ՌԴ Տազանրոգ քաղաքում վերահրատարակված ռուսերեն մի գիրք, որի հեղինակը քսաներորդ դարասկզբին Բաքվի քաղաքագլուխ Ալեքսանդր Նովիկովն է: Գրքի վերնագիրը՝ «Резня в Баку 1905г.», արդեն իսկ հուշում է տեքստի բովանդակության մասին: Մենք, իհարկե, հեռու ենք հեղինակի հայաձեռն լինելու մտքից, քանզի Նովիկովը, հանդիսանալով ցարական Ռուսաստանի գավառական պաշտոնյա, տրամաբանական է, արտահայտում էր ռուսական կայսրության տեսակետներն ու քաղաքական շահերը: Բայց գրքում ներկայացված տվյալներն անուղղակիորեն արտացոլում են նաև մեծապետականության խտրական բնույթը փորձ ազգերի նկատմամբ: Մասնավորապես, նախկին քաղաքագլուխը, ներկայացնելով 1905-ի փետրվարին Բաք-

վում տեղի ունեցած ազգամիջյան բախումները, պատմածագումնաբանական հետևություններ է անում՝ համաձայն այն ժամանակվա պաշտոնական մեկնության, ըստ որի՝ բաքվահայերը ոչ հազվադեպ տեղի բաթարներին արյունալի բախումների առիթ են տվել՝ նրանց համբերությունը ենթարկելով դաժան փորձությունների, և որ միայն «պատիվն ու խիղճը կորցրած մարդիկ կարող են այդ ջարդերը վերագրել քաղաքապետարանի կամ նրա գործակալների կողմից հրահրված»: Նովիկովը փորձ է անում հավաստիացնել, որ Բաքվի քաղաքային իշխանությունները ջանքեր են գործադրել կանխելու արյունահեղությունը, սակայն հայերն ու բաթարները եղել են բավարար չափով զինված ու իրար հանդեպ թշնամաբար տրամադրված, որի արմատները հնուց են գալիս: Զասկանալ կարելի է Ալեքսանդր Նովիկովի խուսանավումները բախումների բուն պատճառներից, հատկապես որ մեզ քաջածանոթ է ռուսական հայաստան քաղաքականությունը թե՛ նախորդ դարասկզբին և թե՛ դարավերջին: Ձեռագիրը նույնն է, ու կարծեք ոչինչ չի փոխվել: Ակամայից հիշում ես սուսգայիթյան նախնիի առթիվ ՆՍՅՄ գլխավոր դատախազի տեղակալ Ալեքսանդր Կատուսևի ցինիկ մեկնաբանությունը, որը յուրօրինակ ծաղրանք էր հայ ժողովրդի հասցեին:

Նովիկովի պարագայում ուշագրավը թերևս փաստերի «դոկումենտալությունն» է: Նա լուսանկարներ է հրապարակել բացառապես հայերի ջարդերի, նրանց տները հրկիզելու վերաբերյալ: Անկախ պատճառների նեղափոխումից, դեպքերի արձանագրությունը վկայում է այդտեղ թուրքական յաթաղանի առկայության մասին, որին ռուսական սվինն անգոր եղավ, թե՛ պարզապես չցանկացավ դիմագրավել: «Ժողովուրդն ու մամուլն ինձ մեղադրում են, որ ես իբր չեմ օգտագործել իմ տրամադրության տակ գտնվող գործերը, հարձակվողների դեմ ժամանակին զենքի ու զինքն զործարկել...»,- գրում է գրքի հեղինակը և հակադարձելով ընդդիմախոսներին՝ նշում է, որ ինքը ոչ միայն ամեն ինչ արել է ջարդերի դեմն առնելու համար, այլև մեծ ցավ է ապրել այդ արասպետի տեսարանների վկայ լինելուց: Նա, սակայն, չի պատասխանում կարևոր հարցադրմանը, թե որտեղից խաղաղ բաթարներին (ինձ) ներկայիս հորջորջյալ ազերիներին) այդքան զենք ու զինամթերք:

Մնացածը տարակուսելի բախումների «սկզբնապատճառն» է, որ մեջքերում է նախկին քաղաքագլուխը: Այսպես, ըստ գրքի հեղինակի՝ հունվարի կեսերին երկու հայ զինվոր, հետապնդելով բանտից փախուստի դիմած բաթարին, ձերբակալելու պահին մտադրվել են փետրվարի 13-ին և 16-ին Բաքվում տեղի ունեցած բազմազգ և մուսուլմանական հանրահավաքներում ընթերցվում են խաղաղասիրական բովանդակությամբ կոչեր... Ասես տեղի է ունեցել դրկից կանանց խոսքակոչի, այլ ոչ թե ահավոր մի սպանդ, որին զոհ են զնացել հազարավոր անմեղ հայեր:

Զատկանշական է, որ հետագայում խորհրդային (աղբբեջանական) կինեմատոգրաֆիան գեղարվեստական ֆիլմ էր նկարահանել հիշյալ ողբերգական դեպքերի առնչությամբ, որտեղ, սակայն, զավեշտախառն շեշտումներով են մատուցվում 1905 թվականի փետրվարի 6-9-ի դեպքերը: Ավագ սերնդի ներկայացուցիչները երևի կհիշեն հայտնի դրվագը տվյալ ֆիլմից, երբ կռվի թունդ պահին «աշխարհից բեյ-խաբար համբալը», ձեռքերը տարածելով, փորձում է բարիշեջնել կռվող կողմերին՝ ասելով. «Աղա բուլա է՛, այ՛ էրմենի, այ՛ մուսուլման, աղա բուլա է՛»: Միախաղաղասիրական նախաձեռնությունների ազերական ամփոփ պատկերացումը... Գրքի վերահրատարակման խմբագիր Վաղին Զարուբյանովը առաջաբանում գրում է. «Հայոց պատմությունը կարիք չունի հարձակման: Զարձակվում են նրանք, ովքեր դատարկություն են զգում իրենց անցյալի հանդեպ ու ձգտում են հարստանալ մշակույթով ու պատմությամբ հարուստ հարևանների հաշվին: Հայերի համար կարևոր է պաշտպանվել տեղեկատվական պատերազմում: Եվ գիրքը նման դեպքերում լավագույն վահանն է»:

Սվեդլանա ԽԱԶԱՏՐՅԱՆ

Խեղճությունը խավար ու լուռ, Աղոթքները դառն ու ցավոտ, Ձանգակներից զարկը տխուր, Եվ խուղերիդ լույսերն աղոտ: Նախին բանաստեղծի համար «ոչու-թական տեսիլ» է, այն բացվում է կրկին տրտում հայացքով, ու նրա երգիչ որդին կսկիծով գրում է. Ո՞ր երկրի սրտում թախիծ կա այնքան, Եվ այնքան ներում - ո՞ր երկրի սրտում, Որտե՞ղ են քարերն այսքան վերաբարձ, Լեռների նրճան, պարզված երկնքին, Որտե՞ղ է աղոթքն այնպես վեհ ու պարզ, Եվ զոհաբերումն այնպես խնդազին: Տերյանի սրտում ավերված երկրի պատկերն է, որի դեմ ծնկաչոք նա շշնջում է. «Ինչպե՞ս չսիրեն, երկիր իմ կիզված... Դու յոթնապատիկ խոցված Տիրամայր»: Հայաստան-մայրը երգիչ որդու համար «Կամավոր զոհ է... խաչված երկիր...»: Բանաստեղծը ճանաչում է իր երկիրը, հավատացյալ իր ժողովրդին ու հպարտությամբ բացակայում:

Կեսների մեջ» թեկուզ «սրտով մոլոր», բանաստեղծը երագում է հարագատ երկիր-մոր «մեղմ երգերը, որպես օրոր»: Որդու վերադարձը տվորական այցելությունն է, այլ նվիրումի խոստովանությունն. Ու կարոտակեզ ահա կրկին Վերադառնում են, որ առհավետ Ունկնդիր լինեն քո հին երգին Եվ լամ, լամ անուշ քո երգի հետ: Երկրի գիշերներն ինչքան էլ լինեն «անգույն ու մթին», և այդ բացվի «դառն ու մահախոտ», միևնույն է, Տերյանի քնարական հերոսը հավատում է երկրի առավոտին: Ամեն մի նոր արհավիրքի պահին անգամ «Ուխտավոր անդուլ դարերի ժառանգ» նախորդն բացում է հավատի վարձույթը և աշխարհով մեկ ծնում. Թող զուժկան գիշերն անհաստա դավե, Որքան մուրթ սև՝ այնքան ես համառ, Երկնիր, իմ երկիր, հավատով անմար, Սուրբ է քո ուղին և պսակըդ՝ վեհ: Ցավի ու մորմոքի, վրեժի ու հույսի խորհուրդներ են Տերյանի նախնական տողերը: Նախին թեկուզ մեռակ, բայց անկրկնելի է տիեզերական աստղածիրերում: Պոետի քնարական հերոսի «Նախնական հոգին» օտար է թշնամուն: Նախին «Ոչ քարերը դարավոր, ոչ գրերն ավեր» օտարին չեն պատմի ոչ խոր վշտի մասին, ոչ էլ երկունքի: Սակայն նա մատնեղով սրբելով աղի արցունքները, ի հեծուկս օտարի, ընդգծում է, որ իր երկիրը խնդալու է «խնջույթում հրով հին», ընդգծելով «Որ մեր գինին-մեր արյունն է դա»: Աստծո Որդու՝ Քրիստոսի շուրթերով, Քրիստոսի հանգույն Տերյանը ի լուր աշխարհի, Գրիգոր Նարեկացու նման գրում է Աստծո հետ՝ վկայակոչելով ոչ միայն իր ժողովրդի, այլև քրիստոնյա ժողովուրդների անունից մեր անմարում հավատի և լուսավոր ապագայի մասին: Բնապատկերների, մարդկային ներաշխարհի բազմաշերտ երանգների հյուսվածքներ են Նախինի նվիրված տերյանական գրեկները, դրանց շարքում և այս անձեռակերտ հյուսվածքը. Երկիր Նախի, երագ հեռավոր,

Քնած ես քնքուշ թագուհու նրման, Մի՞թե ես պիտի երգեմ քեզ օրոր, Եվ արքայական դնեմ գերեզման, Եվ մի՞թե, մի՞թե սիրտըս ավերված Ավերակներիդ լուկ պիտի պարզեմ, Քո տեղ փայլախաչն ստվերդ մեռած, Քո սուրբ խոսքի տեղ իմ լացը լսեն: Իհարկե, Տերյանը վշտակիր, սակայն վստահ է հազարամյա իր երկիր-մոր կուռ կամքին, հառնելու ուժին, ապրելու տենչին, արարելու աստվածային կարողությունը: Եվ նա, ասես ելած Արարատի սեզ գագաթ, այնտեղից բռունցքած իր ցատունն ու վրեժը, մատ է թափ տալիս վայրենի ցեղերի դեմ և բացակայում: Մի խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին, Մեր երկիրը ավերված, բայց սուրբ է ու հին: Որպես լեռն է մեր պայծառ տեսել հազար ծյուն, Այնպես նոր չեն մեզ համար դավ ու դառնություն: Բարեւոնն է եղել մեր ախոյանը՝ տես - Անհետ կորել, անցել է - չար մշուշի պես: Ասորիքն է եղել մեր թշնամին - ահա՛ Դաշտ է տեղը, և չկա քար քարի վրա: Ամրակուռ է մեր հոգին - դարերի գավակ, Շատ է տեսել մեր սիրտը ավեր ու կրակ: Աստվածալեզու այս բանաստեղծության մեջ Տերյանը մեկ առ մեկ բերում է Նախի ժողովրդի ազգային բարեմասնությունները՝ նրա հոգու վեհությունը, սրտի ջերմությունը, արքայական խոսքը, երկիր-տաճարը, արդարամտությունը, աշխատասիրությունը, լավատեսությունը: Ուղիղ հարյուր հինգ տարի առաջ հայ ժողովրդի հանդեպ երիտթուրքերի կազմակերպած մայրոց տեղապանությունը չի մոռացվել ու չի էլ մոռացվելու: Աշխարհը, որ անտարբեր էր այն օրերին, մեր օրերում ուշքի է գալիս: Տասնյակ երկրներ ճանաչել են Հայոց ցեղասպանությունը:

Ինչպես գրում է Իսրայելի Բաց համալսարանի պրոֆեսոր, փիլիսոփայության դոկտոր Յաիր Աուրոն, «Մինչև հիմա բանավեճեր են ընթանում... Թուրքիայում հայ բնակչության ելակետային թվի, ինչպես նաև այն մասին, թե արժե՞ Հայկական ցեղասպանությունը թվագրել 1894-1923 թվականներ ժամանակաշրջանին, թե՞ սահմանափակվել 1915-1916 թվականներով: Ամեն դեպքում նույնիսկ ամենակոպիտ գնահատականը խոսում է այն մասին, որ ոչնչացվել է Թուրքիայի հայ բնակչության մոտ կեսը՝ աշխարհի յուրաքանչյուր երրորդ հայը»: Վերջերս Սիրիայի Հանրապետությունը ճանաչեց 1915թ. երիտթուրքերի կողմից կազմակերպված Հայոց ցեղասպանությունը: Կարևոր ենք համարում նշել, որ մուսուլմանական Արևելքում Սիրիան առաջին պետությունն է, որ ընդունում է Հայոց ցեղասպանությունը՝ խիստ խարագանելով նաև ժամանակակից Թուրքիայի կառավարիչներին, որոնք ձգտում են ժխտել իրենց նախորդների հանցագործությունը մարդկության հանդեպ: Ամեն դեպքում անողորմ մարդկային հիշողությունը, հեռու չէ այն օրը, երբ աշխարհի առաջադեմ մարդիկ կբարձրաձայնեն անմահ Տերյանի ցասունալից տողերը. Եգիպտական բուրգերը փոշի կդառնան, Արևի պես, երկիր իմ, կը վառվես վառման: Որպես Փյունիկ կրակից կեղևնե նոր, Գեղեցկությամբ ու փառքով վառ ու լուսավոր: Արիացիր, սիրտ իմ, ել հավատով տոկուն, Կանգնիր հպարտ որպես լույս լեռն է մեր կանգուն:

Սուրբադ ԽԱՆՅԱՆ Բանասիրական գիտությունների դոկտոր, ԱրՊՀ պարավոր պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿՈՑԵՔԱՆԱԿԱՆ

ՍԱՐՍԱՓ ՖԻԼՄԵՐԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿՐԱ

Վերջին տարիներին համաշխարհային կինոն ուժեղ փոխվել է: IT տեխնոլոգիաների օգնությամբ ստեղծվող հատուկ էֆեկտներն այնքան են փոխում եւ չափազանցացնում իրականությունը, որ սովորական կինոն նայելն արդեն հետաքրքիր չէ: Դրա համար հատկապես այն երեխաները, որոնց հոգեկանը դեռեւս ձեւավորված չէ, շուտ կախվում են հոլիվուդյան ձեռքբերումներից: Խոսքը նույնիսկ 6+ ֆիլմերի մասին է: Ինչու՞ են երեխաները սիրում սարսափ ֆիլմեր: Ինչպես ցույց է տալիս իրական կյանքը եւ մանկավարժադաստիարակչական փորձը, սարսափելի կամ վախ պարունակող պատմություններն արդիական են 6-7-ից մինչեւ 11-12 տարեկան երեխաների համար: Հոգեբանության ոլորտի շատ մասնագետներ համոզված են, որ այսպես կոչված մանկական վախերը պետք է ապրվեն եւ ռազիոնալացվեն հենց մանկության ժամանակ: «Ձմշակված» մանկական վախերը պրակտիկ հոգեբաններին լավ ծանոթ խնդիրներից են: Կան շատ հասուն մարդիկ, որոնք, այդպես էլ չհաղթահարելով մանկական վախերը, հարմարավետ չեն զգում իրենց, օրինակ, տանը մենակ մնալուց:



Մանկական սարսափ-պատմությունները, վախ պարունակող զանազան հեքիաթներն ու պատմվածքներն այն միջոցներին են պատկանում, որոնց օգնությամբ երեխան հնարավորություն է ստանում ավելի արդյունավետ եւ անցավ հաղթահարել իր վախը: Դա յուրահատուկ մարզում է՝ կոփելու խիզախությունը, քաջությունը, համարձակությունը, կամքի ուժը եւ այլն: Այդ կերպ բավարարվում է երեխայի ճանաչողական, հետազոտական պահանջումները: Այդպես նրանք ինքնահաստատվում են եւ ճանաչում իրենց ինքնարժեքը, մարզում անձնային սահմանների զգացողությունը:

Ֆիլմերի շուրջ դպրոցականների հետաքրքրությունների վերահամուրթը թույլ է տալիս պնդել, որ սարսափ ֆիլմերը իրենց արդիականությամբ եւ հետաքրքրությամբ զբաղեցնում են երկրորդ-երրորդ տեղեր: Դիտարժանության հանդեպ դեռահասների պահանջումները, վառ հույզեր ապրելու եւ սուր զգացողություններ ունենալու մեջ արտահայտվելով, որը բացարձակապես բնական է հոգեպես առողջ երեխաների համար, հակառակ մեծերի ջանքերի, դարձնում է նրանց ֆիլմարվեստի այդ ժանրի կայուն հետմորդներ:

Շատ ֆիլմեր, որոնք զովազդվում են արտադրողների կողմից որպես ընտանեկան դիտման համար լավագույն ֆիլմեր, նույնպես պարունակում են ցնցող կադրեր, ուղեկցվում են տազնապային երաժշտությամբ եւ համապարզապես ազդեցիկ հատուկ էֆեկտներով:

Դա արվում է դիտողներին ներգրավելու համար, որպեսզի դիտելու ընթացքում նրանց համար ծանծրալի չլինի: Արդյո՞ք օգտակար է դա երեխաների համար:

Սարսափ ֆիլմերի ազդեցությունը երեխաների հոգեկան աշխարհի վրա անկանխատեսելի է: Ըստ վիքիպեդիայի՝ գեղարվեստական ժանրի սարսափ ֆիլմերը հակված են հանդիսատեսի մոտ առաջացնելու վախի, տագնապի եւ անորոշության զգացողություններ: Հոգեբանները պնդում են, որ մանկ թեմատիկայով ֆիլմերը կարող են լուրջ շեղումներ առաջացնել երեխաների հոգեհուզական վիճակում: Տրամաբանորեն վերլուծելով՝ ցնցող գործողությունները, սարսափելի իրեշնեքը, չավարտվող հետապնդումները, հալածանքը կարող են պարզապես վախեցնել երեխաներին: Պարբերական դիտումներից հետո երեխայի հոգեկանը դառնում է անկայուն,

մեղմ բացատրեք, որ դա ընդամենը անհմատորների լավ աշխատանք է: Դերասանների հիանալի խաղ է, ուրեմն չպետք է վախենալ նրանից, ինչ տեղի է ունենում կադրում, իրականում դա հնարավոր չէ: Սարսափ ֆիլմերի ազդեցությունը մարդու վրա անկասկած է: Լինում են դեպքեր, երբ ծնողները չեն նկատում երեխայի մոտ քնի խանգարումներ կամ վախի արտահայտումներ, բայց որոշ ժամանակ անց երեխան ագրեսիա է ցուցաբերում շրջապատի հանդեպ: Դա սարսափ ֆիլմերից եւ մարտաֆիլմերից կուտակված արդյունքն է:

Աշխատեք, որ երեխան ինչքան հնարավոր է, քիչ նայի հեռուստացույց, համակարգիչ, հեռախոս: Շարժեք նրանց հետաքրքրությունը դեպի գիրք կարդալը, սերը դեպի սպորտ: Կազմակերպեք ընտանեկան զբոսանքներ եւ խաղեր, որպեսզի երեխան գտնվի իրականության մեջ, այստեղ եւ հիմա, այլ ոչ թե սավառնի կասկածելի կինոյի գլուխգործոցների հետհուզական երեւակայության մեջ:

Սարսափ ֆիլմերի ազդեցությունը կարող է լինել ոչ միայն բացասական: Կան մարդկանց խմբեր, որոնք ունեն ադրենալինային կախվածություն: Նրանք հակում ունեն փնտրել կյանքում այնպիսի իրադրություններ, որոնք նպաստում են այդ հորոնի արտադրմանը, ինչպես, օրինակ, ռիսկային արկածներ, պարաշյուտով թռիչքներ: Սարսափ ֆիլմերը նպաստում են ադրենալինի արտադրմանն առանց կյանքի համար վտանգի: Հանդիսատեսները, չնայած վախին, հասկանում են, որ ֆիլմն իրենց կյանքի համար ոչ մի վտանգ չի ներկայացնում: Այդ պատճառով նրանք կարող են հանգիստ նայել ֆիլմը եւ վայելել անհանգիստ զգացողություններ:

Նման ֆիլմերը լավ մարզում են նյարդերը: Ապացուցված է, որ այդ ժանրի ֆիլմեր պարբերաբար դիտող մարդիկ ավելի կայուն են իրական սթրեսների հանդեպ, քանի որ հեռուստային հետ ապրելով ծանր, վտանգավոր իրադրություններ, մարդ ենթագիտակցորեն սովորում է հաղթահարել իր վախերը: Այդ ֆիլմերը կարող են օգտագործվել բժշկական նկատառումներով:

Կարող ենք եզրակացնել, որ սարսափ ֆիլմերի դիտումը երեխաների համար պետք է սահմանափակել, այնինչ որոշ մեծերի համար դրանք նույնիսկ անհրաժեշտ են: Բայց անպայման ուշադրություն դարձրեք ձեր վիճակի վրա: Սահմանափակեք դրանց դիտումը, եթե ունեք քնի խանգարումներ, դյուրագրգռություն, տագնապայնություն կամ ագրեսիա:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

Շնորհավորանք

ՄԱՆԿԱՎԱՐԺ ԵՌԱՆՊՈՒՆ ՈՒ ՆՎԻՐՅԱԼ



Ամենակարևոր երևույթը դպրոցում, ամենաուսուցանող առարկան, ամենալավ կենդանի օրինակը՝ այս ամենն ամբողջանում է ուսուցչի մեջ:

Աղոջ Դիստերվերո

Անկասկած, մեծ մանկավարժի բնորոշիչ իմաստախոսությունն իր մեջ համեստորեն կերպավորել է ուսուցիչ-մանկավարժ-դասվար Հասմիկ Գևորգյանը: Նա, ով շուրջ երեք տասնամյակ անափ սիրով ու խոր նվիրումով կանգնած է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության պատասխանատու և անչափ կարևոր ճակատում: Դասվար, որին, համոզված ենք, տարիների հոլովություն այսպես կհիշեն իր այն սաները, ովքեր առաջին անգամ են ոտք դրել դպրոցի շենին և բախվել առաջին ուսուցչուհու՝ ոչ մի բառով չթարգմանվող հայացքին՝ մայրահո՞տ, բարի՞, քնքշածպի՞տ, սիրահա՞տ... Կհիշեն, թե ինչպես շատ սիրելի ընկեր Գևորգյանը մոր պես ժպտաց իրենց, սիրով ափի մեջ առավ իրենց ձեռքն ու տարավ դասարան... Ամեն ինչ հեքիաթի պես էր. ամեն մոր դասի հետ սկսեցին սիրել դպրոցը, գիրքն ու գիտելիքը, թեև առան գիտելիքի անեզր օվկիանոսում վստահաբար լողալու համար... Կշատանան, իհարկե, այդ սաներին դասավանդող ուսուցիչները, բայց նա՝ ընկեր Գևորգյանը, միշտ կմնա ուրիշ՝ չկրկնվող, չփոխարինվող, առաջին ուսուցչուհի... Այսօր շատ սաների առաջին ուսուցչուհին բոլորել է իր կյանքի 50-րդ գարունը. իմաստուն տարիք, վաստակած ու շնորհակալ տարիներ, որոնց հետագիծը արտացոլում է անխնայ ու եռանդուն աշխատանք, նվիրվածություն և մանկավարժական օրինակելի վարք:

Մնում է միայն բարեխիղճ, պատասխանատու, իր գործի նվիրյալ մանկավարժին մաղթել երկրային կյանքի ևս 50 գարուններ՝ լի հաջողությամբ, առողջությամբ, անձնական երջանկությամբ և բարիքներով:

Դուք արժանի եք անկեղծ երախտագիտության և շնորհակալության՝ հայ մանկանը թե ու թիկունք լինելու, մայրական սիրով պարուրելու և գիտելիքների անձայրածիր զանձարանի ոսկե բանալին նրան հանձնելու համար: Տա՛ւ Աստված, որ Դուք դեռ երկար վայելեք Ձեր սաների հաղթարշավները:

Շնորհավոր տարեդարձ, սիրելի ու բարի գործընկեր... Բարի ցանկություններով՝ Կադարծու և Պառավաթունքի մանկավարժական կոլեկտիվներ

ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՆԵՐ

1. այլանս – միություն, դաշինք
2. բաններ – ցուցապաստառ
3. բեյջ – անվանաբարտ
4. դալան – կամար, կամարանցում
5. դերմատոլոգ – մաշկաբան
6. դիսոնանս – աններդաշնակություն
7. թինեյջեր – դեռահաս, պատանի
8. ինաուգուրացիա – պաշտոնակալություն, երդմնակալություն
9. իդենտիֆիկացիա – նույնականացում, նույնացում
10. ինտերպրետացիա – մեկնաբանություն
11. կալկուլյատոր – հաշվիչ
12. կնոպկա – 1. կոճակ, 2. կոճզամ
13. կոնսենսուս – համաձայնություն
14. կրիտերիա – չափանիշ
15. մեյքափ – դիմահարդարանք, դիմահարդարում
16. միսիա – առաքելություն
17. նոմինացիա – անվանակարգ
18. չաք – զրուցարան
19. պարոլ (ռազմ.) – անցաբառ, նշանաբառ
20. պեյզաժ – բնանկար, բնապատկեր
21. պրեզենտացիա – շնորհանդես, ներկայացում
22. պրոֆեսիոնալ – արհեստավարժ

23. ռեսայլինգ – ռճափոխություն
 24. սկեպտիկ – կասկածամիտ, թերահավատ
 25. վերբալ – խոսքային, բանավոր
 26. քոմենթ – մեկնաբանություն
 27. օնկոլոգ – ուռուցքաբան
 28. օրիենտացիա – կողմնորոշում
 29. օֆիցիալ – պաշտոնական
 30. ֆիլտր – գոփիչ
 31. սվաստիկա – կեռխաչ / կեռախաչ
 32. կոնվերտացիա – փոխարկում
 33. շարմ - հմայք
 34. ռեպրեսիա – ճնշում, բռնաճնշում, հալածանք
 35. սինիստրոն – համաժամանակյա, միաժամանակյա
 36. ինդեքս – 1. դասիչ, 2. ցուցիչ, 3. ցուցակ, ցանկ
 37. շաբլոն – ձևանմուշ
 38. պողպարա - հողատապ
 39. ռեզիդենցիա – նստավայր, կեցավայր
 40. ռիտուալ – 1գ (զոյ.) ծես, 2գ արարողություն, արարողակարգ,
3. (ած.) ծիսական

ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵ

ԳՐԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ՆՈՎԵԼ

ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՎԵՆ

- Երեսուն...

Տղան ցնցված նայում էր աղջկան: Աղջիկը ժպտում էր հանելուկային մի ժպիտով, որը, սակայն, բավականին խոսուն էր. ոչ առաջինը ես, ոչ էլ վերջինը կլինես, որ գարնանում է:

Չէ, չի կարող պատահել, աղջիկը հաստատ ստում է, այսքան երիտասարդ է, թարմ, ոնց որ տասնութ տարեկան լինի, հեջ չես ասի քսան, էլ ո՞ր մնաց երեսուն: Չէ, չի հավատում տղան, ախր...

Դասի ժամանակ աղջիկը սևեռում հայացքներ էր զգում իր վրա: Հետևի նստարանին նստած տղան երբեմն անհանգիստ շարժումներ էր անում, շուտ-շուտ հարցնում՝ կարելի՞ է դուրս գալ... Ժխելու, և հետ գալուց էլ աչքի պոչով նայում էր գլուխը կախ աղջկան, որը դատով տարված էր այնքան ինքնամոռաց, ասես լսարանում իրենից բացի ոչ ոք չկար: Երբեմն նա հարցեր էր տալիս դասախոսին, և տղան ակամայից ուշադրություն դարձրեց աղջկա նուրբ և մեղեդային ձայնին, կարծես երգում էր:

Տղայի անհանգստությունն աղջկան այնքան էլ չհուզեց: Սովոր էր նման երևույթների, որոնք, սակայն, այնքան թուլեցին և կարճատև էին... Նույնիսկ կարող էր ճշգրիտ ասել՝ վերջն ինչ կլինի: Ասե՞ր...

Չէ, մի անգամ էլ կհանձնվի իր իրավացիության մեջ: Իսկ մինչ այդ վերջը... միայն գավեշտալի հիշողություն կունենա, ուրիշ ոչինչ:

Դասն ավարտվեց: Ուսանողները դուրս եկան լսարանից և ցրվեցին տարբեր ուղղություններով: Աղջիկը հրաժեշտ տվեց ընկերուհիներին և թեքվելով դեպի իրենց փողոցը՝ քայլերն արագացրեց: Կեսօր էր, և միջօրեի արևն անխնայ վառում էր: Աղջիկը չէր ուզում երկար քայլել արևի տակ, առանց այդ էլ սևուկ է...

Հետևից քայլեր լսեց, որ արագ մոտենում էին: Ուզում են հասնեն իրեն: Ու զգաց, թե ով կլինի:

- Տո՞ւն եք գնում:

- Ըհը:

- Շա՞տ հեռու է: Տղայի հայացքը ծակող էր, և հետաքրքիր գույնի աչքեր ուներ: Կանաչ: Չէ: Շագանակագույն: Էլի չէ: Խա՞ղ: Տեր Աստված, ախր մեկ անգամ նայելով չես կարող իմանալ, այ աղջիկ, մտքում հանդիմանեց ինքն իրեն:

- Չէ, ինչո՞ւ:

- Ուղղակի հարցրի, ինչ է, չի՞ կարելի,- ժպտաց տղան: Խիտ հոնքեր ունի: Բայց ի՞նչ գույնի են նրա աչքերը:

- Ծանոթանանք: Անունս Արման է:

- Հա՞ջելի է: Տաթև:

- Ուրախ եմ:

Աղջիկը վարից վեր նայեց տղային: Լավ բարձրահասակ է: Օձանելիքն էլ օրիֆլեյն է, հաստատ: Էլի չկարողացավ որսալ նրա աչքերի գույնը, չնայած տղայի հայացքը համառ էր:

- Շատ շոգ է, չգնա՞նք մի տեղ նստենք, մի սառը բան կխմենք, համ էլ կզրուցենք:

Ճանապարհը մի տեսակ երկարել էր: Աղջիկը չէր տեսնում կողքով անցնող մարդկանց, մեքենաների աղմուկը կարծես խլացել էր ու չկար: Թվում էր՝ պիտի քայլեն դեռ շատ երկար:

Շփոթվել էր ու չէր նկատել, որ էլ արագ չի քայլում: Մի ուրիշ ժամանակ այդքան ժամանակում արդեն տանը կլիներ:

Արևը կեծ-կեծին էր տալիս, ասֆալտը հալչում էր, ոտքը դնում՝ զգում էիր տակի փափկությունը:

- Չէ, շնորհակալ եմ, գործեր ունեն:

- Ե՛՛է՛է՛, ի՞նչ գործ էս շոգին: Թե՞ հորինե-

ցիք, որ չգաք: Համ էլ արի դու-ով խոսենք, հա՞: Ես Դուք-ը մի տեսակ օտար է:

- Ոնց ուզում ես,- աղջկան դուր եկավ տղայի անմիջականությունը, չնայած դեռ ինքն էլ պատրաստ չէր այդպես միանգամից...

- Հիմա գնա՞նք, թե չէ,- պնդեց տղան:

- Չէ, իրոք չեմ կարող գալ, շնորհակալ եմ:

- Ե՛, լավ չէ, որ չես գալիս, այ որ գայիր, ուրիշ: Բա ինչո՞վ ես զբաղված, աշխատո՞ւմ ես:

- Ըհը, ուսուցչուհի եմ:

- Բահո՞ո, ոնց չեմ սիրում ուսուցիչներին, դպրոցում լավ չէի սովորում, երևի դրա համար, չէ՞:

- Հնարավոր է:

Մեղրագույն: Բաց մեղրագույն: Կարելի է ասել՝ ոսկեգույն: Տղայի աչքերը ոսկեգույն էին՝ թավ, խիտ հոնքերի տակից նայող:

- Ազատ ժամանակ ինչո՞վ ես զբաղվում:

- Գիրք եմ կարդում, բայց ազատ ժամանակ ընդհանրապես չի լինում, միշտ զբաղված եմ:

- Հետաքրքիր է, իսկ զբոսնելու գնո՞ւմ ես, քաղաք դո՞ւրս ես գալիս:

- Հա, իհարկե, առանց դրա չի լինի: Ընկերուհիներով դուրս եմք գալիս, զբոսնում, երբեմն որևէ սրճարանում նստում եմք, սենց էլի:

- Դե ասա լավ էլ ժամանակ եք անցկացնում էլի,- տղան ժպտաց: Հաճելի ժպիտ ունի:

- Իսկ դո՞ւ ինչո՞վ ես զբաղված,- առաջին հարցը իր կողմից, թերևս:

- Ես երաժիշտ եմ, աշխատում եմ գինվորական նվագախմբում ահա մի քանի ամիս է:

- Աշխատավարձդ հեղինակո՞ւմ է:

- Ոչինչ, էլի, շատ չէ, յուրա եմ գնում, ի՞նչ արած: Կներես, բայց ուզում եմ հարցնել, քանի՞ տարեկան ես:

Ահա՛: Սպասում էր հենց այդ հարցին: Մտածում էր՝ ինչու չի հարցնում այսքան ժամանակ, կգարձանար ախր...

- Իսկ քանի՞ կտաս,- աղջիկը չարածճիտեմ ժպտում էր:

Հասնում էին տուն: Մի քանի մետր, և հրաժեշտ կտան իրար: Գուցե՞ ընդմիջտ:

- Դե մի քսան-քսանմեկ, ոչ ավել,- տղայի հայացքը զարմացած էր՝ այդ ի՞նչ հարց էր յանի որ տվիր:

- Մխավում ես, ես երեսուն տարեկան եմ:

Ու ծիծաղեց՝ իր խոսքերի շքմեցուցիչ ազդեցությունը տեսնելով: Հաստատ գիտեր, որ վաղն այլևս տղան չի նայի իր կողմը, անհանգիստ շարժումներ չի անի ու չի ուղեկցի իրեն մինչև տուն: Ու գիտե՞ր ինչու: Որովհետև ինքը երեսուն տարեկան է: Այ որ քսան լիներ, տղան հաստատ ծեռ չէր քաշի, կշարունակեր սիրահետել, իսկ հիմա հանձնված էր, որ կլինի իր մտածածի պես:

Ու չսխալվեց: Ոչ հաջողօր օրը, ոչ էլ մյուս բոլոր օրերին տղան այլևս իրեն չուղեկցեց, դասի եկավ, մի քանի րոպեով նստեց ու ներողություն խնդրելով դասախոսից՝ շուտ գնաց: Ասես փախչում էր ինքն իրենից, իրեն նեղող մի հարցից, դաժան իրականությունից, աղջկանից...

ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Անուշը նստած էր տան շեմին դրված նստարանին: Այդ նստարանին անառիկ ցերեկից բերանները բաց ու խուփ անելուց քրտնած նրա ընտանիքի անդամները հաճությամբ նստում էին, հանգստանում և վայելում զով երեկոյի ցանկալի օդը: Երբեմն նրանք խմբովին թեյ էին խմում, երբ հավաքվում էին նաև հարևանները, և նրանք խոհանոցից բերում էին սեղանը, թեյի պարագաները՝ ինքնատի գլխավորությամբ, և ավանդական թեյը մուրը հասնում էր իր գագաթնակետին: Թեյից հետո էլի զրուցում էին, թուղթ խաղում կամ նարդի, և մոտ ժամը տասին ցրվում: Դե, գյուղացի

մարդիկ են, բանջարանոցներում ամբողջ օրը չարչարվում են, վաստակած գալիս տուն, անասուններին բեջարում, ընթրում և... մի քիչ հանգստանում, որ գնան քնելու: Եվ կողքից ասում էին, որ Անուշը շատ հյուրասեր և հարևանասեր կին է, սիրող մայր և հավատարիմ կին: Թվում էր՝ նա ուներ երջանիկ լինելու բոլոր հիմքերը: Երեք տղա զավակները, ինքն ու իր ամուսինն էին կազմում այդ փոքրիկ հասարակությունը, ուր և Անուշը հաստատել էր լավ դաստիարակություն և կարգուկանոն: Հարևանները նրան երանի էին տալիս՝ աղջի, ի՞նչ բախտավոր ես, որ այդ տղաները քոնն են, դե ամուսինդ էլ մի հատ է գյուղում: Անուշը միայն լսում էր, և տխուր, թե՞ ուրախ ժպտում: Ոչ, ավելի շատ տխուր էր նրա ժպիտը, և տարտամ: Ո՞վ կարող է հասկանալ մարդու հոգին:

Անուշը մենակ էր այդ ժամին: Տղաները տանը չէին, ով գիտե, բանջարանոցում էին, իրենց հողամասում, գետում լողանալու գյուղի տղաներով, թե...

Ամուսնու տեղն էլ, ինչպես ասում են, չի էլ ուզում իմանալ: Այդպես լավ է, մենակ՝ իր մտքերի հետ, իր հետ: Բայց իր անտարբերությունը, ոչ, ավելի ճիշտ, հիասթափությունը, որ նա ծանր ցնցումի պես ապրեց վերջերս, խնամքով թաքցնում էր բոլորից անխտիր և ուրախ էր, որ դա իրեն հաջողվել է, որ ոչ ոք չգիտի իր ցավի մասին, որ երբեմն պարզապես անտանելի էր դառնում: Երբեմն: Ուրախ էր, որ չգիտեն մարդիկ իսկությունը, բայց երբեմն ասում էր նրանց՝ բարեխոսներին, որ, չիմանալով իսկությունը՝ զովաբանելով իրեն անվանում են երջանիկ մարդ...

Ոչ, նրանք՝ ամուսինը, որդիները, գյուղի հասարակության համար վատ մարդիկ չեն, նույնիսկ լավ օրինակ են որոշ մայրերի որդիների համար: Պարզապես ինքը հիասթափված է, հիասթափված...

Անուշը նայեց շուրջը: Կեսօրվա մեռյալ ժամն է, մարդ-մուրդ չկա, բակը բաց էր դիմացից, հանկարծ չտեսնեն իր լացը: Տանը չի կարող նստել, պատերը ճնշում են իրենց լուսթյամբ, իսկ իրեն մի քիչ շարժում է պետք, թվացյալ ունկնդիր:

Ամուսնական քսանհինգ տարվա համատեղ կյանքից Անուշը քիչ լավ բան է հիշում իր ամուսնուց: Չսիրելով ամուսնացավ, բայց կատարյալ հավատարիմ լինելու անկողորմ կամք ունեցավ և երախտապարտ եղավ իր կողակցին փոխադարձ հավատարմության համար: Մի քիչ հպարտ զգաց երեք տղա ունենալով: Կյանքում սնվեց սին պատրանքներով և չիրականացած երազանքների թախիծն ապրեց:

Անուշը բարձրագույն կրթությամբ խիստ խելացի կին է, շատ կարդացած, դպրոցում ուսուցիչ է ահա արդեն 30 տարի: Հարգվում է կուլեկտիվում, սիրվում իր աշակերտների կողմից: Ինքն էլ սիրում էր խելոք և ուսունմասեր երեխաներին, բարի նախանձով նախանձում նման զավակներ ունեցող ծնողներին: Բայց իր երեխաները բոլորովին ուսման մեջ չխորացան, ծուլացան սովորել: Ոչ մեկն էլ բնավորությամբ իրեն չնմանվեց, դպրոցում լավ չսովորեցին, և նրանց բարձրագույն կրթություն տալու իր երազանքը մնաց անկատար:

Եվ վերջում վրա հասավ հիասթափությունը: Կյանքի ընկերոջ սխալ ընտրությունը ամենադաժան իրողությունն է մարդու կյանքում: Շատ երիտասարդ էր, երբ ամուսնացավ, չհասցրեց խորապես ճանաչել, սիրահարվեց ու մտածեց՝ նա է իր կեսը: Իսկ հետագայում, ապրելով մի հարկի տակ, ամեն օր գիտակցում էր, որ նա չէ, ում հետ պիտի ինքն ապրեր, ում հետ պիտի կիսեր ամուսնական

իր կյանքը: Մակարդակների, դաստիարակության, աշխարհընկալման, բնավորությունների ակնհայտ տարբերություններ կան իրենց մեջ, երբեմն այդ տարբերություններ խիստ ակնհայտ էին դառնում և անտանելիորեն ցավեցնում: Ինչքա՞ն պետք էր համակերպվել ինքը: Այդ սրտմաշուկ հարցերով էլ անցկացրեց քսանհինգ տարի, բաժանումի միտքը հանգիստ չէր տալիս, բայց այդպես էլ չհամարձակվեց բարձրաձայնել, ծնողներին ասել, քույրերին, մեկից մի խոսք լսել՝ լավ, թե վատ, միայն թե սիրտը հանգստանար: Իրական բացահայտումը ցավագին էր և անպասելի: Սակայն հավանաբար ամենքի կյանքում էլ կատարվում է նման մի բան, բացահայտման նման մի դեպք, վաղ թե ուշ, կամա թե ակամա: Որքա՞ն անհույս է ինքը հիմա, մեծակ և անօգնական, ո՞ւմ պատմի այդ ամենը, ո՞ւմ հետ կիսվի: Ո՞վ կհավատա: Չեն հավատա: Ինքն այնքան է գովել նրան տեղի-ամտեղի, ջանացել է տեսնել լավը, գովել է պարսավելին, հիացել ոչնչով: Եվ դիմացինին միշտ թվացել է, որ իրենք ներդաշնակ, կատարյալ ընտանիք են: Հիմա խոսել իսկության մասին՝ ուշ է: Ու վատն էլ այն է, որ ամուսինն իրեն երբեք չի գնահատել, միշտ էլ դժգոհ է եղել իրենից: Որդիները հիմա դժգոհ են, ամուսինը որոշել է միապետություն հաստատել:

Անուշը դառը քմծիծաղեց: Մտավ տուն, նայեց ժամացույցին: Ժամը հինգն էր, բայց տաք էր դեռ: Շուրջը լռություն էր տիրում:

Ի՞նչ անի: Գուցե ընթրի՞ք պատրաստի: Սովորաբար յոթին են ընթրում: Գուցե մի քիչ կարդա՞, ուղեղը հանգստանա: Կամ քնի՞:

Անուշը, չնայած մենակ էր, օգնող չունեի տնային գործերում, բայց տունը միշտ մաքուր էր, կոկիկ: Ասե՛նք՝ կեղտոտողը ո՞վ է, բոլորն էլ մեծ են, պատասխանատու: Բայց Անուշը շատ էր երազել աղջիկ ունենալ, տղաները, մեկ է, իրեն չեն հասկանա, նրանք չունեն այն հոգեկան հարստությունը, վեհ մտածելակերպն ու գաղափարները, լայն աշխարհայացքն ու կրթվածությունը: Նրանք չեն կարող կիսել իր մտածումըների բովանդակությունը, հասկանալ դրանք: Ամուսինն էլ բավական փոքրոգի և ցածրամիտ մարդ է: Ամուսնական հարաբերությունների ընթացքում Անուշը երբեք չզգաց որևէ զգացմունքի խորություն կամ դրա որոշակի դրսևորում: Այդ մարդը սոսկ մտածում էր իր աշխատանքային գործիքների և սարքավորումների, աշխատանքի, փողի, փայլուն ապագայի մասին, բայց այդպես էլ ողջ կյանքում մնաց որպես սևագործ բանվոր, և երբ Անուշը, տարիներ հետո խոսք բացեց աղջիկ ունենալու մասին, նա մկավեց՝ մտքինդ ասա... Նրա սերն էլ իր պես անգրագետ էր:

Անուշը նորից դուրս եկավ բակ, նստեց նույն տեղը: Գոնե մայրը կամ քույրերից մեկն այստեղ լինեին, ախր ինքը բոլորովին մենակ է այս գյուղում: Նրանք բոլորն էլ քաղաքներում են ապրում, իրենից շատ հեռու: Ինքն իրեն խղճաց: Մինչև ե՞րբ կշարունակվի այս ամենը: Շրջապատված է իրեն հարազատ, բայց օտար մարդկանցով:

Գիտի, թույլ չի տա, որ ուրիշներն իմանան իր վիշտը. ոչ, նա մայր է, կին: Դա իր զավակներին կազդի, նրանք, միևնույն է, չեն համակերպվի բաժանման գաղափարի հետ: Ինքն ուժեղ է, կղիմանա: Չնկատեց, որ արցունքները դանդաղ հոսում են այստեղով: Պետք է հաշտվել իրականության հետ, չնայած դա երբեմն այնքան դժվար է...

Կարինե ՓԱԹՅԱՆ
բ.գ.թ., րոգենպ,
Շուշիի փեխտուղիական
համալսարան

